

ԱՍՏՈՒԾԸ ԵՆՉԻ
ԸՆԴՆՈՒՄԻ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ



Թարգմանեց ու խմբագրեց՝

ՄԱՇՏՈՑ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղապարեան

ԱՍՏՈՒԾԱՇՆՉԻ ԸՆԻՃԱՆՈՒՐ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ա) Ի՞ՆՉ Է ԱՍՏՈՒԾԱՇՆՉՈՒՄՈՐ

Աստուածաշունչը, կամ Սուրբ Գիրքը, հաւաքածոն է այն գրքերի՝ որոնք Սուրբ Հոգու ներշնչմամբ շարադրուած՝ իրենց որպէս հեղինակ ունեն Աստուծուն, եւ որպէս այդպիսիք յանձնուել են Եկեղեցուն:

Եթէ կամենում ենք լաւ հասկանալ՝ թէ ի՞նչ են Սուրբ Գրքերը, նախեւառաջ պարտաւոր ենք ուշադրութիւն դարձնել այն փաստի վրայ, որ այս Գրքերը, ի տարբերութիւն միւս բոլոր գրքերի, ունեն իւրայատուկ եւ եզակի երկու յատկութիւններ. առաջինն այն է՝ որ ունեն աստուածային ծագում, որովհետեւ շարադրուել են Սուրբ Հոգու ներշնչմամբ. երկրորդը՝ որ Աստուածաշունչը Աստուծոյ կողմից յանձնուել է Իր Եկեղեցուն որպէս սրբազան աւանդ եւ աստուածային պարգեւ, որը նա պարտաւոր է պահպանել, մեկնաբանել եւ բացատրել մարդկանց, որպէսզի բոլորը, իրենց երկրային կեանքի ընթացքում Աստուծոն ճանաչելով եւ սիրելով, կարողանան հասնել երկնային յաւիտենական երանութեանը:

Աստուծոյ բնութեան ճանաչումը մեր համար հնարաւոր դարձնելուց բացի, Աստուածաշնչի ընթերցանութիւնը պէտք է մեզնում արթնացնի մի վիթխարի սէր՝ Աստուծոյ եւ մերձաւորի նկատմամբ: Կարող ենք ուղղակիօրէն ասել, որ եթէ Աստուածաշնչի ընթերցանութեամբ տուեալ անձը չի հասնում վերոյիշեալ սիրոյն, չի հասնում Աստուածաշնչի իմաստի ըմբռնմանը. «Իւրաքանչիւր ոք, որ լիովին գիտակից է՝ թէ Օրէնքի լրումը սէրն է, որ բխում է մաքուր սրտից, բարի խղճից եւ անկեղծ հաւատքից¹, վստահութեամբ թող նուիրուի աստուածային Գրքերի բացատրմանը, ամէն ինչից վեր դասելով նրանց շուրջ ծանօթութիւնը: ... Ով կարծում է՝ թէ հասկացել է աստուածային Գրքերը, կամ նրանց մէկ մասը, բայց այս հասկացողութիւնը չի վերածում Աստուծոյ եւ մերձաւորի նկատմամբ սիրոյն, իրականում դեռեւս չի հասկացել Աստուածաշնչի պատգամը»²:

Բ) ԱՍՏՈՒԾԱՇՆՉԻ ՊԱՏԳԱՄԱՐ

Աստուածաշունչը Աստուծոյ մասին չի խօսում մօտաւոր կերպով, ինչպէս միւս գրքերը, այլ նրանում Աստուծոյ Ինչն է՝ որ Խօսում է Իր մասին: Հին եւ նոր Կտակարանները Աստուծոյ Խօսքն են, կենդանի եւ կենարար Խօսքը: Պատմական դէպքերի ու իրադարձութիւնների նկարագրութիւններից բացի, Աստուածաշնչում անշուշտ գոյութիւն ունի վեհ ուսուցումների մի ամբողջական զանգուած, որից հնարաւոր է քաղել իմաստասիրական խորիմաստ սկզբունքներ եւ բարոյական ապահով կանոններ: Բայց ճշմարտութեան այս գանձի ներկայացումը կատարուում է թանձրացեալ (կոնկրետ), կենսալի եղանակով, որովհետեւ այն սերտօրէն կապուած է իրական իրադարձութիւններին, պատմութիւնից ներս Աստուծոյ միջամտութիւններին. այսպէս, օրինակի համար, Ծննդոց գրքի առաջին գլուխները, որոնցում պատմուում է աշխարհի եւ մարդու առաջացումը, իրենց մէջ բովանդակում են ո՛չ միայն գերբնական, այլ նաեւ բնական կարգի խորիմաստ ուսուցումներ, ինչպիսին է Աստուծոյ կողմից բոլոր արարածների

¹ Հմմտ. 1Տմ 1, 5

² Սբ. Օգոստինոս, *De doctrina christiana*, 1, 36, 40; 1, 40, 44.

արարումը ոչնչից: Երբ կարդում ենք՝ թէ Աստուած ստեղծել է երկինքն ու երկիրը, իսկոյն հասկանում ենք՝ որ Տէրը աշխարհի վերանցական Արարիչն է եւ որ մարդը Նրա ձեռքերի գործն է:

Աստուածաշունչը ներկայացնում է մարդկութեան պատմութեան մէջ այն ամենակարեւոր իրականութիւնները, որոնք վերաբերում են մեր փրկութեանը. սոյն պատմութեան ներսում, որպէս ներքին շարժիչ, տեղադրում է մէկ այլ իրականութիւն, որը նոյնպէս պատմական է, բայց նուազ ընկալելի. բարոյական ազդակները, մղումներն ու գգացմունքները, որոնք Աստուած աստիճանաբար կաթեցրեց աստուածաշնչեան պատմութեան դերակատարների եւ իրադարձութիւնները գրի առնող հեղինակների հոգիներից ներս: Մարդկային պատմութեան ներսում, հետեւաբար, գոյութիւն ունի մէկ այլ պատմութիւն, որն Աստուած ապրում է մարդկանց հետ, ի նպաստ մեր եւ մեր համագործակցութեամբ, երբեմն նաեւ ընդդէմ մեր կամքի:

Աստուածաշունչը փրկութեան պատմութիւնն է կամ պատմութիւնն այն բոլոր գործերի, որոնք Աստուած կատարեց մարդկանց աստուածային փրկութեան համար: Այս պատմութեան կենտրոնում գտնւում է այն ըմբռնելու բանալին. Յիսուսի մահն ու յարութիւնը: Խաչն, իրօք, այն վսեմագոյն իրադարձութիւնն է, որով բացատրւում է փրկութեան ամբողջ պատմութիւնը. աշխարհի փրկութեան համար Աստուած մարդանում է, յայնձն է առնում ոճրագործի նման մահանալ Խաչի վրայ եւ երրորդ օրն յարութիւն է առնում մահից. այսպէս Աստուած մարդկութիւնը փրկում է մեղքի, սատանայի ու մահուան ստրկութիւնից:

Յիսուս Քրիստոսի մարդեղութիւնը, մահն ու յարութիւնը, Մարդ-Աստուծոյ խորհուրդը, կազմում են Աստուածաշնչի կենտրոնը. Ծննդոցի առաջին էջերից մինչեւ Յովհաննէսի Յայտնութեան վերջին տողերը՝ ամէն բան ձգտում է մեռած եւ յարութիւն առած Քրիստոսին, ամէն բան կախում ունի Նրանից: Այն օրից ի վեր՝ ինչ Խաչը տնկուեց Երուսաղէմի մօտակայքում եւ պատմութեան կենտրոնում, պատմութիւնն ու աշխարհը իմաստ չեն կարող ունենալ Խաչից հեռու: Այդ պահին, փրկութեան պատմութիւնը հասաւ իր գագաթնակէտին: Ամենակարող Աստուծոյ գերագոյն Սէրը, մահուան չափ խոնարհուելով, յաղթանակ է տօնում մահուան, չարի եւ սատանայական ուժերի դէմ: Սա է Խաչի խորհուրդը. ապրելու համար՝ հարկ է մահանալ, յաղթելու համար՝ հարկ է կորցնել: Յիսուսից առաջ, մեր նախածնողների սկզբնական մեղքից սկսած, ամէն բան խոստում էր, նախապատրաստութիւն, սպասում: Յիսուսից յետոյ, ամէն բան լրում է, կատարում, իրականութիւն՝ յոյսի ու հաւատքի մէջ, մինչեւ ժամանակների վախճանը:

Աստուածաշնչեան պատմութիւնը, ուրիշ որեւէ պատմութեան նման, ունի իր սկիզբը. բայց աշխարհական սովորական պատմութիւններից տարբերուելով, որոնք նկարագրում են միմիայն արդէն կատարուած դէպքեր, աստուածաշնչեան պատմութեան հայեացքն ուղղուած է եզրափակմանը, արդէն գրուած՝ բայց տակաւին չիրագործուած ապագային: Սկիզբը մարդու արարումն է եւ նրա բարձրացումը արդարութեան, սրբութեան եւ երանութեան վիճակին, որը ողբերգական կերպով կորստի է մատնուել: Եզրափակումը երկնքի տեսութիւնն է, երկնային Երուսաղէմի՝ Աստուծոյ սուրբ քաղաքի տեսիլքը: Աստուածաշնչեան պատմութիւնը իրականանում է ժամանակի եւ տարածքի ներսում: Նրանում կարող ենք գանազանել մի քանի դարաշրջաններ, որոնք հետեւեալներն են.

1. Երկրային դրախտը կորցնելուց յետոյ՝ ժամանակն անցնում է դանդաղ: Մեր նախածնողները գործում են սկզբնական մեղքը, բայց Աստուած խոստանում է մի ապագայ Փրկիչ, որը ծնուելու էր Կնոջ սերունդից¹: Ապա անցնում են երկարատեւ դարեր, որոնց ընթացքում Աստուած երբեք չէր մարդկութիւն: Իր ողորմութիւնը ցուցաբերեց հին նահապետների նկատմամբ, ինչպիսիք էին Ենոքն ու Նոյը, որոնց հետ Աստուած յատուկ դաշինքներ հաստատեց: Աթէնացիներին ուղղուած իր ճառում, Պօղոս Առաքեալն այս ժամանակներն անուանում է «անգիտութեան ժամանակներ»², իսկ Հռոմէացիներին

¹ Հմմտ. Ծնդ 3, 15. այս հատուածը կոչւում է «նախաաւետարան», այսինքն «առաջին աւետարան», փրկութեան առաջին ուրախ աւետիս:

² Գործք 17, 29-30

ուղղուած Նամակում՝ «աստուածային համբերութեան ժամանակներ»¹. լիկոնացիներին ուղղուած իր ճառում, կրկին տարսոնացի Առաքեալն է՝ որ հաստատում է՝ թէ այդ ժամանակներում Աստուած իւրաքանչիւր ժողովրդի **Խոյստոյ** քայլել սեփական ճանապարհով²: Այդ ժամանակաշրջանում, Աստուած «համբերում էր», յանդուրժում էր՝ որ մարդկութիւնը փորձառութեամբ ճանաչէր ճշմարիտ Աստծոյ մասին անգիտութեան եւ մեղքի տխուր հետեւանքները:

2. Հասնում է մի պահ, երբ Աստուած վճռականօրէն միջամտում է մարդկութեան պատմութեան մէջ. Աբրահամի անձում արթնացնում է կոչումը, պատուիրելով հետեւել **Խոյստանը**. «Քեզնով [քո սերունդով] կ'օրհնուեն երկրի բոլոր ընտանիքները»³: Սա «խոստման ժամանակն» է, ինչպէս ասում է սուրբ Ստեփանոսը⁴: Այդ պահից սկսած, մարդկութիւնը բաժանում է երկու մասի. մէկ կողմից՝ Աբրահամից սերած ժողովուրդը, միւս կողմից՝ մարդկութեան ճնշող մեծամասնութիւնը, ժողովուրդները կամ հեթանոսները: Ընտրեալ ժողովրդին չպատկանող մարդկանց կեանքը առաջնորդում էր նրանց սրտերում գրուած օրէնքներով⁵. նրանք կարող էին փրկուել բնական օրէնքի պահպանման միջոցով, որովհետեւ Տէրը չի մերժում շնորհը նրանց՝ ովքեր բարին գործադրելու համար ներդնում են իրենց բոլոր ուժերը: Մարդկանց վիթխարի մեծամասնութիւնը, սակայն, խեղդում էր սեփական խղճի ձայնը եւ ապրում էր մեղքի մէջ⁶:

3. Աստուածային մի նոր միջամտութեամբ սկիզբ է տրւում «Օրէնքի ժամանակներին»: Աստուած ընտրում է Մովսէսին, անկէզ մորենու աստուածայայտնութեան միջոցով յայտնելով նրան իր բնութիւնը⁷: Աստուած կնքում է մի դաշինք, Սինայի Ուխտը⁸, եւ հրեաներին տալիս է Օրէնքը, որը նրանք պարտաւոր էին պահել՝ հաւատարիմ մնալու համար Ուխտին: Իսրայէլի ազգատոհմերը Աստուած ընտրում է որպէս իր ժողովուրդը, Աստծոյ ժողովուրդը: Այդ ժամանակից սկսած (Ք.ա. 13րդ դար) մինչեւ Յիսուս Քրիստոս, աստուածաշնչեան պատմութիւնն այլ բան չէ, եթէ ոչ՝ Ուխտի պատմութիւնը, պատմութիւնը Հին Կտակարանի:

Ուխտը, Մովսէսի միջոցով տրուած Օրէնքի հետ միասին, ընտրեալ ժողովրդի կեանքի ու գոյութեան առանցքն էր, վերածնութեան կենտրոնը, որին Իսրայէլը պարտաւոր էր վերադառնալ իւրաքանչիւր ճգնաժամից յետոյ, հաւատարիմ մնալ կարողանալու համար Աստծոյ կողմից ընտրուած ժողովրդի իր կոչմանը: Ծանր կամ յատուկ կերպով հանդիսաւոր պահերին՝ Ուխտը վերանորոգում էր: Այսպէս անցնում են բազմաթիւ եւ բազմապիսի դարեր. Յեսուի առաջնորդութեամբ Քանանի գրաւման շրջանը (Ք.ա. 13րդ դարի վերջում). միմեանցից անջատ ապրող տոհմերի շրջանը (Ք.ա. 12րդ դար եւ 11րդի առաջին կեսին), որոնք դատաւորների առաջնորդութեամբ մասնակի միութիւն էին ձեւացնում՝ որոշակի պարագաների հարկադրանքի ներքոյ. հրէական միապետութեան երկարատեւ շրջանը (Ք.ա. 11-6րդ դար), որոնց ընթացքում մարգարէները վարում էին կրօնական կարեւորագոյն մի պաշտօն, ժողովրդին եւ նրա ղեկավարներին յորդորելով պահել եւ ապրել Ուխտի եւ Օրէնքի իրական ոգին. բաբելոնեան աքսորի ազգային եւ կրօնական ծանր ճգնաժամը (Ք.ա. 6րդ դար), որն իրենից ներկայացրեց մի սարսափելի փորձութիւն, որից, սակայն, իսրայէլացիների հոգին դուրս եկաւ առաւել խրախուսուած

¹ Հում 3, 26

² Հմմտ. Գործք 14, 16

³ Ծնդ 12, 3

⁴ Հմմտ. Գործք 7, 17

⁵ Հմմտ. Հում 2, 12-15

⁶ Հմմտ. Հում 1, 18-32

⁷ Հմմտ. Ել 3, 14-17

⁸ Հմմտ. Ել 19-24; 20ր 29

ու առաւել կորովի դարձած, շնորհիւ մարգարէներէ եւ կրօնական բարեպաշտութեամբ համակուած ազգային մի քանի առաջնորդներէ, ինչպիսիք էին Նէէմիան ու Եզրասը. եւ, վերջապէս, բարեւոնեան աքսորին յաջորդած երկարածիգ շրջանը (Ք.ա. 5-1րդ դար), որը նոյնպէս գերծ չէր վտանգներէ ու լարուածութիւններէ, ինչպիսին էր, օրինակի համար, բռնի հէլլէնականացման փորձը, որին հրեաներին ենթարկեցին Սելեւկացիներէ սերնդին պատկանող ասորական տիրակալները, որոնց դէմ հրեաները ապստամբեցին Մակաբայեցիներէ առաջնորդութեամբ (Ք.ա. 2րդ դար):

Այս երկարատեւ դարերէ ընթացքում է, որ կազմաւորուեցին Իսրայէլի կրօնն ու պատմութիւնը: Աստուածային Հոգու մղմամբ, դատաւորները, թագաւորներն ու զօրավարները պաշտպանեցին ազգային անկախութիւնը, որն անհրաժեշտ պայմանն էր՝ պահպանել կարողանալու համար Հին Կտակարանի յայտնեալ կրօնի միաստուածեան մաքրութիւնը: Աստուածային Հոգու մղմամբ, դարձեալ, մարգարէները հոգատարութեամբ ուսուցանեցին Յայտնութեան ճշմարտութիւնները. նրանցից ոմանք ընդգծեցին Աստուծոյ ժողովրդի բարոյական եւ հասարակական (սոցիալ) պատասխանատուութիւնը (Ամոս). ուրիշներ՝ իր ժողովրդի նկատմամբ Աստուծոյ անսահման սէրը (Ովսէէ). աստուածային վեհութեան աննկարագրելի վերանցականութիւնը (Եսայի). Աստուծոյ հանդէպ անսահմանափակ վստահութեան անհրաժեշտութիւնը (Երեմիա). կամ էլ՝ իւրաքանչիւր անհատի անձնական պատասխանատուութիւնը (Եզեկիէլ): Աստիճանաբար ձեւաւորուած էր յուսաբեր մէկ այլ հոսանք, որը կենտրոնական տեղն էր զբաղեցնում մարգարէներէ պատգամներով. հինկտակարանեան մեսսիանականութիւնը, որն իր լրմանը հասնելու էր Յիսուս Քրիստոսի՝ Մեսիայի Անձում եւ գործունէութեան մէջ: Միաժամանակ, հինկտակարանեան պատմութեան յատկապէս վերջին դարերէ ընթացքում, աստուածային միեւնոյն Հոգու մղմամբ, զարգանում է հրէական իմաստութիւնը. Աստուծոց ընտրուած գերազանց անձինք, Օրէնքի եւ մարգարէներէ ուսուցումներէ շուրջ շարունակական մտածումներով կրթուած, սովոր՝ խորաթափանց հայեացքով խորհրդածելու կեանքի իրականութիւններէ վրայ, Սուրբ Հոգու ներշնչմամբ՝ ձեւաւորում են Հին Կտակարանի այսպէս կոչուած իմաստասիրական գրականութիւնը, որը ներկայանալու էր որպէս Յայտնութեան ամբողջացումը, մարդկանց նախապատրաստելով Փրկիչ Մեսիայի գալստեանը, ինչը որ տեղի էր ունենալու «ժամանակների լրմանը»¹:

4. Վերջապէս հասնում է «ժամանակների լրումը» կամ լիութիւնը. Աստուծոյ Խօսքի մարգեղութիւնը՝ Յիսուս Քրիստոս: Երկրի վրայ ապրուած իր կեանքով, Խաչի վրայ մատուցուած իր զոհաբերումով, որին հետեւում է փառահեղ Յարութիւնը, Քրիստոս յաղթում է այն ուժերին ու իշխանութիւններին, որոնք ստրկացնում են մարդուն: Յիսուս կատարում է մի նոր եւ վերջնական արարչագործութիւն, թէեւ առաջինից շատ ու շատ տարբեր կերպով: Պողոս Առաքեալի առաջարկած այլաբանական պատկերի համաձայն, Յիսուս նոր Ագամն է, վերանորոգուած ամբողջ արարչութեան առաջնեկը. Աստուծոյ նոր ժողովրդի՝ Եկեղեցու Գլուխն է, Եկեղեցուն՝ որի ծնունդը «մարմնից ու արիւնից չէ», այլ հոգուց եւ սիրուց, այն նոր Դաշինքից՝ որն Յիսուս կնքեց սեփական արեամբ: Յարութեամբ եւ երկինք Համբարձմամբ, Յիսուսի մարդկային բնութիւնը, Խօսքի մէկ եւ միակ Անձի ներսում աստուածային բնութեանը միացած (Իպոստատիկ միութիւն), Հայր Աստուծոց ստանում է բացարձակ իշխանութիւն տեսանելի ու անտեսանելի, երկրային ու երկնային արարչութեան վրայ. այսպիսով, այսինքն՝ Յիսուսի Համբարձմամբ ու փառաւորմամբ, սկսում են պատմութեան վերջին ժամանակները:

¹ Հմմտ. Գղտ 4, 4

Գ) ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՆԵՐՇՆՉՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԱԲԱՆԴՈՒՄԸ

Աստուած յայտնուել է մարդկանց

«Աստուած, որ հին ժամանակներում մարգարէների միջոցով զանազան եղանակներով բազում անգամներ խօսեց հայրերի հետ, վերջում, այս օրերում, մեզ հետ խօսեց Որդու միջոցով»¹: Եբրայեցիներին ուղղուած նամակն այսպէս է համարում յեղաշրջական այն հանգրուանները, որոնց Աստուած կամեցաւ հետեւել՝ պատմութեան ընթացքում մարդկանց գերբնական եղանակով յայտնուելու համար: Աստուած փրկութեան իր ծրագրերը նախապէս յայտնեց Իսրայէլին, մարգարէների միջոցով՝ որոնք խօսում էին իր անունից: Բայց իր վերջնական Խօսքը մարդկութեանն աւանդուեց Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ մարդացած Խօսքի կողմից: Իր սքանչելի բարութեամբ եւ իր հոգատար նախախնամութեամբ՝ Աստուած իր ասելիքները համապատասխանեցնում է մեր բնութեանը եւ աստուածային Խօսքը արտայայտում է մարդկային լեզուներով եւ մարդկանց համար սովորական կերպով: Եւ քանի որ գրութիւնը մարդկային հաղորդակցութեան կերպերից մէկն է, յաւիտենական Հայրը կամեցաւ այն գործածել՝ գրութիւնների միջոցով աւանդելու համար մեզ իր Խօսքը: Այդ գրութիւնները Աստուածաշնչի գրքերն են, որոնց «գլխաւոր հեղինակն Աստուած Ինքն է, մինչ մարդը նրանց գործիքային հեղինակն է»², այսինքն՝ շարագրութեան գործիքը Աստուծոյ ձեռքերում:

Աստուած յայտնում է արարչութեան (տիեզերքի, կենդանական ու բուսական աշխարհի) եւ մարդու ներաշխարհի (մարդկային խղճի ներսում արձանագրուած բնական օրէնքի) միջոցով, այնպէս՝ որ մարդը կարող է բանականութեան լոյսի շնորհիւ ճանաչել Նրան: Այս յայտնութիւնը կոչում ենք **Քնակն**: Բայց մարդկային պատմութեան շղթան գոյացնող օրերից մէկում, Յիսուս Քրիստոսի ծնունդից մօտ երկու հազար տարի առաջ, երկնային փրկութեան ճամփան մարդկութեան առաջ բացելու համար, Աստուած գերբնական կերպով յայտնում է Միջագետքում ապրող մի մարդու. Աբրահամին: Վերջինս ստանում է աստուածային մի կոչում, որը նրան մղում է թողնելու իր ծննդավայրը, ինչպէս նաեւ մի խոստում. դառնալու էր հայրը մի բազմամեծ ժողովրդի³: Այդ ժողովուրդը նախ լինելու էր Իսրայէլը, իսկ ապա՝ Յիսուս Քրիստոսի Եկեղեցին⁴: Աբրահամի կոչմամբ, մարդկութեան պատմութեան ընթացքում սկսում է իրագործուել Աստուծոյ ծրագիրը, որն յայտնում է իրեն եւ իր կամքի խորհուրդը: Այս ծրագիրն իր գազաթնակէտին հասնում է Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ մարդացած Խօսքի գալուստով եւ Սուրբ Հոգու առաքմամբ, որը հաւաքում է Եկեղեցին եւ կենագործում է այն: Աստուծոյ այս յայտնութիւնը կոչում ենք **ԳերՔնակն** կամ **Գրակն**, որի միջոցով անտեսանելին Աստուած, ըստ իր անսահման սիրոյ, բարեկամաբար խօսում է մարդկանց եւ զրուցում է նրանց հետ, նրանց հրաւիրելու եւ ընդունելու համար իր հետ հաղորդակցութեան:

Աստուծոյ Յայտնութիւնը արարչների եւ խօսքերի միջոցով

Եկեղեցին ուսուցանում է, որ Յայտնութեան այս տեսնութիւնը տեղի է ունենում միմեանց սերտօրէն կապուած արարքներով եւ խօսքերով, այնպէս՝ որ փրկութեան

¹ Եբր 1, 1

² Սբ. Թովմաս Աբուհնայի, *Quaestiones quodlibetales*, 7, a. 14, ad 5.

³ Հմմտ. Ծնդ 12, 2-3

⁴ Հմմտ. Գղտ 3, 6-9

պատմութեան ընթացքում Աստուծոյ կողմից կատարուած գործերը բացայայտում եւ հզօրացնում են խօսքերով իմաստաւորուած ուսմունքն ու ճշմարտութիւնները, իսկ խօսքերը հռչակում են գործերը եւ պարզաբանում են նրանցում բովանդակուած խորհուրդը: Աստուածաշունչը Աստուծոյ Խօսքն է, որը հռչակում է Նրա կողմից ի նպաստ մարդկանց կատարուած գործերը եւ բացատրում է փրկութեան ամբողջ պատմութեան ներսում ծածկուած խորհուրդը: Աստուածաշունչն իրենում իրօք բովանդակում է Աստուծոյ փրկարար գործերի պատմութիւնը, որոնց գագաթնակէտն են հանդիսանում Քրիստոսի՝ Աստուծոյ միածին Որդու մահն ու յարութիւնը, բայց միաժամանակ՝ մեզ է աւանդում մարգարէների, Քրիստոսի եւ Առաքեալների խօսքերը: Իր ամբողջութեան մէջ, հետեւաբար, Աստուածաշունչը Աստուծոյ շարադրուած Խօսքն է. այն իրենում պարունակում է Աստուծոյ փրկարար ծրագրերի վկայութիւնն ու բացատրութիւնը, այնպէս՝ ինչպէս անցեալում յայտնուեցին արարքներով ու խօսքերով, այնպէս՝ ինչպէս ներկայիս իրականանում են Եկեղեցու կեանքում, եւ այնպէս՝ ինչպէս Տիրոջ երկրորդ գալստեան օրը հասնելու են իրենց լրումին ու լիութեանը:

Իսրայէլը եւ Եկեղեցին. Յայտնութեան աւանդապահները

Իսրայէլի ժողովուրդն ընդունեց եւ իր աւանդութեան մէջ պահպանեց այն խօսքերը, որոնք Աստուած ուղղել էր իրեն Մովսէսի ու մարգարէների միջոցով: Սերնդէ սերունդ վկայելով, իր յիշողութեան մէջ նոյնպէս պահեց այն գործերը, որոնք Աստուած կատարում էր ի նպաստ Իր ժողովրդի, ինչպէս նաեւ պատասխանը՝ որ ժողովուրդը տալիս էր իր Աստուծուն: Իր ծէսում, Իսրայէլը երգում էր Իր հաւատացեալների նկատմամբ Աստուծոյ փառքն ու ողորմութիւնը, իսկ Հին Կտակարանի «իմաստուններ»ը, Սուրբ Հոգուց առաջնորդուած, մարգարէների խօսքերի եւ ընտրեալ ժողովրդի պատմութեան լոյսի ներքոյ խորհրդածում էին կեանքի իմաստի մասին: Ինչպէս պատահել է ուրիշ շատ ազգերի պարագային եւս, Իսրայէլում նոյնպէս – թէեւ իսկապէս իւրայատուկ կերպով եւ աստուածային ներշնչմամբ – ծնուեց մի տեսակ գրականութիւն, որը գովաբանում էր ժողովրդի պատմութիւնը, մարգարէների խօսքերը, ծիսական երգերն ու իմաստունների ուսուցումները: Հին Կտակարանի գրքերը խմբագրուեցին աւելի քան հազար տարիների ընթացքում, Մովսէսից մինչեւ Յիսուսի ծնունդից մի քանի տասնամեակ առաջ. այդ գրքերից մի քանիսը ձեւաւորուեցին աստիճանաբար, յաջորդական մշակումներով ու խմբագրումներով:

Թէեւ տարբեր յատկանիշներով, նման մի բան տեղի ունեցաւ նաեւ Յիսուսի կեանքի պատմութեան հետ. Նրա խօսքերն ու գործերը, յատկապէս մահն ու յարութիւնը, նախ բանաւոր հռչակուեցին Առաքեալների կողմից: Վերջիններս, Աւետարանի քարոզչութեամբ եւ խորհուրդների մատակարարութեամբ¹, Եկեղեցին տարածեցին ամբողջ հռոմէական կայսրութեամբ մէկ: Քրիստոնեաների մէջ նոյնպէս – Սուրբ Հոգու նախաձեռնութեամբ ու ներշնչմամբ – ծնուեց իւրայատուկ նկարագիր ունեցող մի գրականութիւն: Առաքեալներից ոմանք սկսեցին իրենց կողմից հիմնուած համայնքներին նամակներ գրել, բացատրելու համար Յիսուսի գործն ու խորհուրդը, ինչպէս նաեւ քրիստոնէական կեանքի պահանջները: Աւետարանները գրուեցին՝ ի մի հաւաքելով Յիսուսի ուսուցումները եւ Նրա կեանքի ուշագրաւ դէպքերը, այսպիսով հիմնաւորելու համար քրիստոնեաների հաւատքը²: Գրուեցին նաեւ նորածին Եկեղեցու ծաւալման պատմութիւնը եւ Յայտնութեան գիրքը՝ ուր աւետում է չարի դէմ Քրիստոսի վերջնական յաղթանակը: Իրենց ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացնելով Յիսուսի կերպարի վրայ, Նոր Կտակարանի գրքերը շարադրուեցին յիսուն տարուայ ընթացքում:

¹ Հմմտ. Գործք 2, 14-41

² Հմմտ. Յվհ 20, 30-31; Ղուկ 1, 1-4

Աստուածային Յայտնութեան պահպանումն ու փոխանցումը սրբազան Աւանդութեան միջոցով

Իսրայէլի ժողովուրդը սկզբում, ապա Եկեղեցին, ուրեմն, աւանդապահներն են արարքներով եւ խօսքերով տրուած գերբնական Յայտնութեան, որի միջոցով Աստուած կամենում է բացայայտել Ինքն Իրեն, Հաղորդակցուել մարդկանց հետ, յայտնել մարդկանց փրկութեան վերաբերեալ Իր կամքի յաւիտենական վճիռները, որպէսզի մարդիկ մասնակից դառնան այն աստուածային բարիքներին, որոնք գերազանցում են մարդկային մտքի ըմբռնողութեան սահմանները: Իսրայէլը եւ Եկեղեցին ո՛չ միայն ստացան աստուածային Յայտնութիւնը, այլ նաեւ դարձան այն գործիքները՝ որոնցով ապահովուում է այդ Յայտնութեան աւանդումը, որովհետեւ Աստուած, ըստ Իր անբաւելի բարութեան, կամեցաւ՝ որ մարդկանց փրկութեան համար Իր կողմից յայտնուած բոլոր ճշմարտութիւնները մնան ամբողջական, անաղարտ, եւ աւանդուեն բոլոր սերունդներին: Աստուածային Յայտնութիւնը կենդանի կերպով պահպանուում ու փոխանցուում է Աստծոյ ժողովրդի բանաւոր Աւանդութեան միջոցով: Յայտնութեան աւանդման եւ մշտատեւ գործադրման համար, Յիսուս ուղարկեց Սուրբ Հոգու լոյսով եւ ուժով զգեստաւորուած Առաքեալներին, բոլոր ժողովուրդներին քարոզելու Աւետարանը, մկրտելու եւ այսպիսով ծաւալելու Եկեղեցին: Առաքեալներն, ապա, որպէս իրենց յաջորդներ նշանակեցին Եպիսկոպոսներին, նրանց յանձնելով ղեկավարման, ուսուցման եւ առաջնորդութեան իրենց պաշտօնը:

Սրբազան Գրութիւնները

Բանաւոր Աւանդութիւնից բացի, Աստծոյ փրկարար ծրագրերի համաձայն, Յայտնութիւնը ներկայացուել եւ աւանդուել է նաեւ Աստուածաշունչը ձեւացնող գրքերի միջոցով: Այս գրքերը, որոնք ծնուեցին Իսրայէլում եւ առաքելական շրջանի Եկեղեցում, Յայտնութեան առանձնաշնորհեալ ու եզակի արտայայտութիւնն են, այնպէս՝ ինչպէս Աստուած կամեցաւ հաղորդել այն Իր ժողովրդին, գրաւոր, սահմանուած՝ բոլոր մարդկանց փրկութեանը:

Յայտնութիւնը, որն Աստուած արարքներով եւ խօսքերով տալիս է Իր մասին եւ որով յայտնում է մարդկութեան փրկութեան աստուածային ծրագրերը, սրբազան հեղինակների կողմից նախապէս աւետուել, պատմուել եւ բացատրուել է Հին Կտակարանի գրքերում. այնպէս, սակայն, որ հինկտակարանեան գրքերը ո՛չ միայն պարունակում են յիշեալ Յայտնութիւնը, այլ փրկութեան տնտեսութիւնը նրանցում գտնուում է Աստծոյ Խօսքը լինելու իր իրական նկարագրով: Այս իսկ պատճառով, աստուածային ներշնչմամբ շարադրուած գրքերը ունեն մշտատեւ արժէք: Սա նշանակում է՝ որ Աստուած Իր ժողովրդին եւ բոլոր մարդկանց խօսում է այդ գրքերի միջոցով. Աստծոյ Խօսքն են: Նոյնը տեղի է ունենում նաեւ Նոր Կտակարանի գրքերի պարագային, որոնցում Աստծոյ Խօսքը, որն աստուածային զօրութիւն է հաւատացեալների փրկութեան համար¹, ներկայանում եւ իր ուժը բացայայտում է գերազանց կերպով: Նորկտակարանեան գրութիւնների այս իւրօրինակ դիմագիծը հետեւանքն է ո՛չ միայն այն փաստի՝ որ նրանցում բովանդակուած է Յիսուս Քրիստոսի եւ Նրա կողմից իրականացուած փրկագործութեան վերաբերեալ Առաքեալների ուսուցումները, այլ յատկապէս այդ գրքերի եզակի նկարագրի՝ որ կայանում է Քրիստոսի եւ Եկեղեցու խորհուրդի յաւիտենական եւ աստուածային վկայութիւնը լինելու մէջ: Դրանց միջոցով, այսինքն, Աստուած Ինքը խօսում է Իր Եկեղեցուն եւ ամբողջ աշխարհին, հաղորդելու համար Յիսուս Քրիստոսի կողմից իրագործուած փրկութիւնը:

¹ Հմմտ. Հռմ 1, 16

Աստուածաշունչը եւ Աստուածայինը

Աստուածաշունչի՝ Հին եւ Նոր Կտակարանների գրքերը Եկեղեցու կողմից նկատուած են որպէս յատուկ եւ բարձր արժէքով օժտուած գրքեր. սրբազան գրքեր են, աստուածային ճշմարիտ խօսքը, վկայութիւնը՝ որն Ինքնին Աստուած տալիս է բոլոր մարդկանց համար պարգեւուած փրկութեան: Ինչպէս նաեւ՝ Եկեղեցու հաւատքի մշտատեւ կանոնն են: Այսպիսով, սրբազան Աւանդութիւնը եւ Աստուածաշունչը սերտօրէն կապուած են միմեանց եւ հաղորդակից են: Քանի որ երկուսն էլ բխում են աստուածային միեւնոյն ակունքից, որոշ առումով ձեւացնում են մէկ միակ իրականութիւն եւ ձգտում են միեւնոյն նպատակին: Յիրաւի, Աստուածաշունչը Սուրբ Հոգու ներշնչմամբ գրաւոր շարադրուած աստուածային խօսքն է. այս նոյն աստուածային խօսքը, որն Առաքեալներին պարգեւուել է Քրիստոս Տիրոջ եւ Սուրբ Հոգու կողմից, սրբազան Աւանդութեամբ փոխանցուած է յաջորդ սերունդներին, ամբողջապէս եւ առանց աղճատումների, որպէսզի վերջինները, ճշմարտութեան Հոգու կողմից լուսաւորուած, քարոզչութեան միջոցով հաւատարմօրէն պահեն, ներկայացնեն եւ պաշտպանեն այն:

Աստուածաշունչը կազմող գրքերը, որոնք Իսրայէլի եւ Եկեղեցու կողմից նկատուած են որպէս սրբազան, պարզապէս հին Իսրայէլի կամ առաքելական շրջանի քրիստոնեաների գրքերը չեն: Ուրիշ բան է մի ժողովրդի կամ կրօնական մի շարժման պատկանող գրականութիւնը եւ ամբողջովին ուրիշ բան է գիրքը կամ գրքերի ժողովածոն, որը սրբազան է՝ որովհետեւ Աստուած խօսել եւ խօսում է այդ գրքերի միջոցով: Ահա այս երկրորդ իմաստով է, որ Իսրայէլը սկզբում եւ ապա նաեւ Եկեղեցին որպէս Աստուծոյ խօսք ընդունեցին եւ կարգացին Աստուածաշունչի գրքերը: Կարգացին դրանք որպէս Աստուծոյ ճշմարիտ խօսք, գիտակից՝ որ իրենք են այդ գրքերում բովանդակուած աստուածային Յայտնութեան աւանդման պատասխանատուները, քանի որ Աստուծոյ ընտրուած սուրբ ժողովուրդն են, սկզբում մէկը՝ ապա միւսը: Հին եւ Նոր Կտակարանների սրբազան գրքերը եւ սրբազան Աւանդութիւնը, հետեւաբար, այն հայելին են՝ որում երկրի վրայ պանդուխտ Եկեղեցին վայելում է Աստուծոյ տեսութիւնը, մինչեւ այն օրը՝ երբ կը հասնի տեսնելու Նրան երես առ երես:

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻ ԱՍՏՈՒԾԱՅԻՆ ՆԵՐՇՆՉՈՒԹՅԱԾՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՏՔԻ ԴՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է

Եկեղեցու հաւատքը

Աստուածաշունչը կազմող գրքերի սրբազան բնոյթը նրանց բովանդակութեան կամ գործածած գրական ու խօսակցական ձեւերի հետեւանքը չէ, այլ՝ նրանց ակունքի, այսինքն այն փաստի՝ որ նրանց շարադրումը կատարուել է Աստուծոյ կողմից գերբնական ազդեցութեան ներքոյ, որն անուանում ենք «աստուածային ներշնչում» եւ որն այդ գրութիւնը իսկապէս դարձնում է Յայտնութիւն կամ Աստուծոյ խօսք: Եկեղեցին միշտ պաշտպանել է Աստուածաշունչի գրքերի սրբազան բնոյթի վերաբերեալ Առաքեալներից ստացած հաւատքի այս ճշմարտութիւնը. Աստուածաշունչի գրքերը պէտք է ընդունուեն որպէս սրբազան եւ կանոնական, որովհետեւ Սուրբ Հոգու ներշնչմամբ շարադրուած լինելով՝ որպէս հեղինակ ունեն Աստուծոն եւ որպէս այդպիսիք են յանձնուել Եկեղեցուն:

Յիսուսի եւ Առաքեալների ուսուցումը Հին Կտակարանի գրքերի վերաբերեալ

Սրբազան գրքերի ներշնչուածութիւնն ունի գերբնական բնոյթ, ինչպէս Աստուծոյ կողմից մարդկանց տրուած գրական (կամ գերբնական) ամբողջ Յայտնութիւնը: Մի իրականութիւն է, հետեւաբար, որն իր ամբողջութեան մէջ ընկալելի է միմիայն հաւատքի

լոյսի օգնութեամբ: Աստուածային ներշնչման ներքոյ շարագրուած գրքերի գոյութիւնը եկեղեցին ընդունում է որպէս Առաքեալների միջոցով Յիսուսի կողմից ստացած հաւատքի ճշմարտութիւն: Անկասկածելի է՝ որ Յիսուսի օրօք ամբողջ հրեայ ժողովուրդը սրբազան եւ բացարձակ արժէք էր վերագրում Հին Կտակարանի գրքերին, որոնք ընթերցւում, մեկնաբանւում եւ մեծարւում էին ծիսակատարութիւնների ընթացքում:

Յիսուս եւ Առաքեալները, իրենց հերթին, հաստատեցին Աստուածաշնչի անվիճելի ու աստուածային հեղինակութիւնը եւ նրա ներշնչուածութիւնը: Ահա այսպէս է Տէրը հաստատում Հին Կտակարանի մնայուն արժէքը. «Ճշմարիտ եմ ձեզ ասում. մինչեւ որ չանցնեն երկինքն ու երկիրը, մէկ հովտ կամ մէկ նշանագիր անգամ չի անցնի Օրէնքից, առանց որ ամէն բան նախ կատարուի»¹, եւ երբ Առաքեալներին բացատրում էր իր մահուան եւ յարութեան իմաստը. «Հարկ էր՝ որ կատարուէին Մովսէսի Օրէնքում, Մարգարէներում եւ Սաղմոսներում իմ վերաբերեալ գրուած բոլոր բաները»²:

Ուրիշ առիթներով, ե՛լ Յիսուս ե՛լ Առաքեալները հաստատում են Հին Կտակարանի աստուածային ներշնչուածութիւնը, երբ ասում են՝ որ Աստուած խօսել է մարգարէների միջոցով³:

Նոր Կտակարանի հատուածներից մէկը յստակ կերպով հաստատում է Աստուածաշնչի աստուածային ներշնչուածութիւնը. «Ամբողջ Գրութիւնն, իրօք, Աստուծոյ ներշնչուած է եւ օգտակար է ուսուցանելու, համոզելու, ուղղելու եւ արդարութեանը վարժեցնելու համար»⁴: Նորկտակարանեան հատուածներից մէկ ուրիշը խօսում է սրբազան հեղինակների վրայ Սուրբ Հոգու կողմից գործադրուած ազդեցութեան մասին. «Մարգարէական գրութիւններից ոչ մէկը ենթակայ չէ անձնական ու անհատական մեկնաբանութիւնների, քանի որ մարգարէութիւններից ոչ մէկը չի տրուել մարդկային կամքով, այլ Սուրբ Հոգու կողմից մղուած՝ այդ մարդիկ խօսեցին Աստուծոյ անունից»⁵:

Նոր Կտակարանի գրքերի ներշնչուածութիւնը

Հինկտակարանեան գրքերի ներշնչուածութեան ճշմարտութիւնը եկեղեցին ստացել է Առաքեալների միջոցով. նմանապէս, նորկտակարանեան գրքերի սրբազան բնոյթը ճանաչել է առաքելական Աւանդութեան միջոցով, որը եկեղեցու ներսում զարգանում է Սուրբ Հոգու օժանդակութեամբ:

Յիսուսի խօսքերն ու գործերը գրի չեն առնուել պարզապէս տեղեկութիւններ տալու համար, այլ՝ նրա հանդէպ հաւատքը արթնացնելու ու գորացնելու եւ յաւիտենական կեանքը ստանալու նպատակով⁶: Շարագրուած գիրքն, այսպիսով, օժտուած է վկայութիւն լինելու յատկութեամբ, տրուած՝ միաժամանակ Առաքեալի եւ Սուրբ Հոգու կողմից⁷: Յայտնութեան գրքում գրուած խօսքերը ներկայանում են որպէս մարգարէական՝ որովհետեւ ծագում են Աստուծոց. այս իսկ պատճառով, վայելում են բացարձակ հեղինակութիւն⁸: Նոր Կտակարանի այն գրքերում, որոնք ժամանակագրական կարգում վերջիններն են, գտնում ենք մէջբերումներ նախորդ գրքերից՝ որոնց ընծայւում է սրբազան արժէք: Օրինակ, Պետրոս Առաքեալի ընդհանրական երկրորդ Նամակում Պօղոս Առաքեալի Նամակներից մի քանիսը ներկայացւում են որպէս հինկտակարանեան գրքերի

¹ Մտթ 5, 18

² Ղուկ 24, 44

³ Հմմտ. Մտթ 1, 22; 22, 31.43; Գործք 1, 16

⁴ 2Տմ 3, 16

⁵ 2Պտ 1, 20-21

⁶ Հմմտ. Յվհ 20, 31

⁷ Հմմտ. Յվհ 15, 26-27

⁸ Հմմտ. Յյտ 1, 3; 22, 18-19

հետ համահասարակական հեղինակություն ունեցող¹, իսկ Պօղոս Առաքելալը Ղուկասի Աւետարանից մի հատուած մէջբերում է որպէս «Գրութիւն»²:

Սրանք ապացոյցներից մի քանիսն են այն փաստի, որ առաքելական շրջանում արդէն՝ Առաքելայների գրութիւնները ճանաչուած էին որպէս Սուրբ Գրութիւն: Եկեղեցու կենդանի Աւանդութիւնը, որն իր անխաբ արտայայտութիւնը գտնում է Սուրբ Հայրերի քարոզչութեան, Մէսի եւ Վարդապետութեան մէջ, աստուածային երաշխաւորութեամբ հռչակում է Նոր Կտակարանի ներշնչուած գրքերի գոյութիւնը եւ տալիս է նրանց անուանացանկը:

Գատանիչներ՝

աստուածային ներշնչում ունեցող գրքերը ճանաչելու համար

Աստուծոց ներշնչուած գրքերը ճանաչելու ապահով դատանիչը Եկեղեցու մշտատեւ Աւանդութիւնն է, որը պահպանում է Առաքելայների հաւատքը, այն անթերի կերպով աւանդում եւ անսխալ կերպով ներկայացնում է Վարդապետութեան միջոցով: Այս դատանիչը վերաբերում է Աստուածաշնչի բոլոր գրքերին եւ գրքերից իւրաքանչիւրին, այսինքն՝ համընդհանուր է: Եւ քանի որ հիմնում է Եկեղեցու անսխալականութեան վրայ, անսխալական է: Ինչպէս նաեւ՝ բոլոր մարդիկ, որոնց փրկութեան համար են գրուել սրբազան գրքերը, կարող են ճանաչել եւ զանազանել՝ թէ որ գրքերն են կազմում Աստուածաշունչը. այսինքն՝ պարզ ու յստակ դատանիչ է:

Բողոքականութիւնը, ժխտելով սրբազան Աւանդութեան արժէքը եւ ընդունելով «ազատ քննութեան» համաձայն մեկնաբանուած «միմիայն Աստուածաշունչը», կարիքը զգաց փնտռելու ուրիշ դատանիչներ՝ սրբազան գրքերի աստուածային ներշնչուածութեան համար: Բողոքականութեան կողմից առաջարկուած դատանիչները բոլորն էլ վաւերական են, բայց գիտականօրէն անբաւարար: Բողոքականութեան առաջին ներկայացուցիչները առաջարկում էին հետեւեալ երեք տեսակի դատանիչները: Առաջին. գրքի նկարագրից բխող դատանիչները, այսինքն՝ ուսուցումների վեհութիւնը, ուսմունքի միասնականութիւնը, ընթերցողներին դէպի Քրիստոս առինքնելու ունակութիւնը: Սրբազան գրքերն անկասկած ունեն այս յատկութիւնները, բայց այս դատանիչների անբաւարարութիւնը շատ պարզ է, որովհետեւ գոյութիւն ունեն հին, միջնադարեան եւ արդի հեղինակների գրչին պատկանող բազում հոգեշահ գրքեր, օժտուած՝ ուսուցումների վեհութեամբ, ուսմունքի միասնականութեամբ եւ ընթերցողներին դէպի Քրիստոս առինքնելու ունակութեամբ, որոնց համար, սակայն, ոչ ոք չի հաստատում թէ գրուել են Սուրբ Հոգու ներշնչմամբ: Երկրորդ. դատանիչներ՝ որ բխում են զգացումների եւ վարքի բարենորոգումից, որոնք ընթերցողի անձում արթնանում են տուեալ գրքի ընթերցանութեան հետեւանքում: Բայց հարկաւոր է ի նկատի առնել՝ որ տուեալ գրքերի աստուածային ներշնչուածութիւնը չի կարող հիմնուել ենթակայական գնահատականների վրայ, որոնք ամբողջովին դիպուածական են, անորոշ, բախտի քմահաճոյքին թողնուած: Երրորդ. բողոքականութեան ներկայացուցիչները գտնում էին՝ որ Սուրբ Հոգին կարող է աստուածաշնչեան գրքերի ներշնչուածութիւնը զանազանելու յատուկ շնորհ կամ լոյս պարգեւել հաւատացեալներից իւրաքանչիւրին: Կասկածի ենթակայ չէ՝ որ Աստուած կարող է այդպիսի շնորհներ պարգեւել երբ եւ ում կամենում է, բայց խօսքը միշտ վերաբերում է անհատական յայտնութիւնների, որոնք ենթակայ են սխալների ու անճշտութիւնների: Այս երեքին աւելացնում էին նաեւ մի չորրորդ դատանիչ, որ վերաբերում էր սրբազան հեղինակի անձին, այսինքն՝ որպէսզի տուեալ գիրքը մաս կազմի Աստուածաշնչին, հարկաւոր է՝ որ հեղինակը մարգարէ լինի, Հին Կտակարանի պարագային, կամ էլ Առաքելայներից մէկը, Նոր Կտակարանի պարագային: Այս դատանիչն ամբողջովին անվաւեր է, քանի որ ներշնչուածութեան պարգեւաշնորհը

¹ Հմմտ. 2Պո 3, 15-16

² Հմմտ. 1Տմ 5, 18

տարբեր է մարգարէական եւ առաքելական պարգեւաշնորհներից, թէեւ բոլորը միասին կարող են գտնուել միեւնոյն անձում:

Միակ վաւերական դատանիչը, որն օժտուած է ընդհանրականութեան, յստակութեան եւ անսխալականութեան նկարագրով, աստուածային Յայտնութիւնն է՝ որ պահպանում է Եկեղեցու կենդանի Աւանդութեան մէջ եւ անսխալ կերպով ներկայացնում է Եկեղեցու Վարդապետութեան կողմից: Եկեղեցին սահմանել է Աստուածաշնչի «կանոն»ը, այսինքն՝ որոշ գրքեր ճանաչել եւ ընդունել է որպէս ներշնչուած եւ սրբազան, Սուրբ Հոգու առաջնորդութեամբ, որը գործում է իրենում եւ առաջնորդում է իրեն զէպի ամբողջական ճշմարտութեան ճանաչումը¹:

ԱՍՏՈՒԱԾԱՆՉԻ ՆԵՐՇՆՉՈՒԹԵԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Գերբնական պարգեւաշնորհ է

Աստուածաշնչի ներշնչուածութիւնը կարող է սահմանուել որպէս մի գերբնական պարգեւաշնորհ, որն Աստուած հաղորդել էր Հին Իսրայէլի եւ առաքելական շրջանի Եկեղեցու մարդկանցից ոմանց, որպէսզի գրաւոր շարադրէին բոլոր եւ միմիայն այն բաները՝ որոնք Աստուած կամեցել է յայտնել մարդկանց: Գրքերը, որոնք աստուածային ներշնչման ներքոյ շարադրուած՝ իրենց մէջ պարունակում են Աստծոյ եւ փրկութեան պատմութիւնից ներս Նրա միջամտութիւնների խորհուրդները, յանձնուել են Եկեղեցուն՝ մարդկանց սրբութեան եւ փրկութեան համար:

Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել աստուածային ներշնչուածութեան գերբնական նկարագրի վրայ: Նման չէ բանաստեղծների կամ դերասանների զգացած ներշնչմանը: Աստուածաշնչի ներշնչուածութիւնը գերբնական է ըստ իր ակունքի, քանի որ տարբերում է նաեւ այն բնական ազդեցութիւնից, որն Աստուած, որպէս տիեզերքի Արարիչ, կիրառում է բոլոր արարածների եւ մարդկային իւրաքանչիւր գործունէութեան վրայ: Միմիայն Աստուածաշունչն է, հետեւաբար, Աստծուց գրուած գիրք. աւելին՝ Աստծոյ Խօսքն է: Ինչպէս նաեւ, գերբնական է ըստ իր բովանդակութեան, քանի որ Աստուածաշնչում պարունակուած աստուածային Յայտնութեան կենտրոնական առարկան խորհուրդներն են՝ որ վերաբերում են Աստծուն (օրինակ, Ամենասուրբ Երրորդութիւնը) եւ մարդկութեան պատմութիւնից ներս Նրա փրկարար գործունէութեանը (օրինակ, Որդու մարդեղութիւնը): Վերջում, Աստուածաշնչի ներշնչուածութիւնը գերբնական է ըստ իր նպատակի. մարդկանց սրբութիւնն ու փրկութիւնը:

Աստուածաշնչի ներշնչուածութիւնը, հետեւաբար, կարող է ներկայացուել հետեւեալ կերպ. ա) ներգործական (ակտիւ) իմաստով, որպէս Աստծուց բխող, որը գերբնական ազդեցութիւն է կիրառում սրբազան հեղինակի վրայ. բ) կրաւորական (պասսիւ) իմաստով, որպէս սրբազան հեղինակներին տրուած պարգեւաշնորհ, որոնք գրում են՝ Աստծուց բխող ներշնչման ներքոյ. գ) վերջաւորութեան իմաստով, հաշուի առնելով աստուածային ազդեցութեան արդիւնքը, որը սրբազան գրքերն են:

Աստծոյ եւ սրբազան հեղինակի գործը

Աստուածաբանութիւնը եւ Վարդապետութիւնը ճշտել են՝ թէ ինչ բանի մէջ է կայանում ներշնչուածութիւնը եւ ինչպիսին է սրբազան հեղինակի վրայ կիրառուած աստուածային ներգործութեան բնոյթը: Ներշնչուածութեան վերաբերեալ, Ընդհանրական Ուղղափառ Եկեղեցու ուսմունքը, համառօտ կերպով, հետեւեալն է:

Աստուածաշնչի գրքերը շարադրուել են Աստծոյ կողմից դրական եւ գերբնական ներգործութեան կամ ազդեցութեան ներքոյ, ուստի՝ Աստուած նրանց գլխաւոր հեղինակն

¹ Հմմտ. Յվհ 14, 25-26; 16, 13

է, մինչ սրբազան հեղինակները՝ նրանք նոյնպէս իրական եւ ճշմարիտ հեղինակներն են, բայց երկրորդական: Մտային, հոգեբանական եւ ֆիզիքական զանազան կարողութիւնները, որոնք սրբազան հեղինակը կիրառում է գրելիս, ենթարկուել են շնորհի այն հեղմանը, որը նրանց ունակութիւնները բարձրացրել է այն աստիճան՝ որ սրբազան հեղինակների կողմից հաստատուած ամէն բան հարկաւոր է ընդունել որպէս Սուրբ Հոգու կողմից հաստատուած: Ունակութիւնների սոյն բարձրացումը հիմնուած է սրբազան հեղինակի մարդկային կարողութիւնների գործունէութեան վրայ, որոնք չեն ճնշուած Աստուծոյ ազդեցութեան ներքոյ: Աստուածային ազդեցութիւնը ներկայ է՝ քանի դեռ ընթացքի մէջ է գրքի շարադրումը. հազիւ թէ վերջանում է գրքի շարադրումը՝ դադարում է նաեւ աստուածային ազդեցութիւնը:

Աստուածաշնչի ներշնչուածութեան հարցը քննարկող աստուածաբանները առաջարկել են զանազան բացատրութիւններ. բոլորն էլ ընդունելի են եւ Ընդհանրական Ուղղափառ Եկեղեցու հաւատացեալները կարող են քուէարկել մէկի կամ միւսի օգտին, որը կը թուայ իրենց աւելի համոզիչ, պայմանով՝ որ միշտ պահպանուի ներշնչուածութեան փաստի էական կորիզը:

Ոմանք, սակայն, առաջարկել են բացատրութիւններ՝ որոնք աղաւաղում են Աստուածաշնչի ներշնչուածութեան գաղափարը. այդպիսիք չեն ընդունուել Եկեղեցու կողմից եւ ենթարկուել են վարդապետական ուղղումների: Ընդհանրապէս, սխալ են այն տեսութիւնները՝ որոնք նուազեցնում են աստուածային միջամտութիւնը կամ էլ սեղմում են սրբազան հեղինակների գործունէութեան դաշտը: Սխալ է, օրինակ, մտածելը՝ թէ աստուածային ներշնչումը կայանում է պարզապէս Աստուծոյ կողմից տրուած օգնութեան կամ օժանդակութեան մէջ, որպէսզի շարադրողը գրքում չլինէին սխալներ. ինչպէս նաեւ, սխալ է մտածելը՝ թէ ներշնչուածութիւնը Աստուծոյ կողմից լոկ ընդունումն ու վաւերականացումն է մի գրքի, որը հեղինակն արդէն շարադրել ու վերջացրել է:

Ներշնչուածութեան պարզեւաշնորհի բացատրումը գործիքային պատճառականութեան սկզբունքով

Ներշնչուածութեան աստուածաբանական բացատրութիւններից աչքի է ընկնում Սուրբ Թովմաս Աքուինացու «գործիքային պատճառականութեան տեսութիւն»ը, որն ուսումնասիրելով չրեօրէն րրո-աթ (gratis datae) շնորհների – յատկապէս մարգարէութեան շնորհի – բնոյթը, հաստատում է՝ որ այդ շնորհները ստացող անձը գործում է որպէս աստուածային գործիք (homo fit instrumentum Dei)¹:

Որեւիցէ մէկ գործիքի պարագային կարելի է գանազանել երկու գործողութիւն. առաջինը իրեն իւրայատուկ գործողութիւնն է (կացինը, օրինակ, կտրում է). երկրորդը, գործիքային գործողութիւնն է, շնորհիւ գործող ենթակայի՝ որը գործածում է տուեալ գործիքը (փայտահատը, կացինի դէպքում): Այսպիսով, թէ՛ գործողը եւ թէ՛ գործիքը մասնակցում են գործողութեանը եւ նրանցից իւրաքանչիւրը թողնում է իրեն յատուկ հետքը: Գործողութեան արդիւնքը, Աստուածաշունչը, ամբողջովին եւ իր մասերից իւրաքանչիւրում պէտք է վերագրուի Աստուծուն, որպէս իր գլխաւոր հեղինակին. բայց ամբողջովին եւ իր մասերից իւրաքանչիւրում պէտք է վերագրուի նաեւ սրբազան հեղինակին, երկրորդական գծի վրայ, որպէս գործիքային հեղինակ:

Քանի որ սրբազան հեղինակը բանական եւ ազատ էակ է, գործիքային պատճառականութեան սկզբունքի կիրառումը համանմանական (անալոգիկ) է. այսինքն՝ գործողութեան ընթացքում Աստուած սրբազան հեղինակի վրայ ազդում է այնպէս՝ որ նա շարունակում է գործել որպէս կենդանի, բանական եւ ազատ էակ:

Ներշնչուածութեան պարզեւր, որը ձրի եւ անցողական բնոյթ ունեցող գերբնական շնորհ է, ներգործում է սրբազան հեղինակի իմացականութեան, կամքի եւ գործադիր օրգանների վրայ:

¹ Սբ. Թովմաս Աքուինացի, Summa theologiae, II-II, q. 173, a. 2; q. 177, a. 1; q. 178, a. 1, ad 1.

Նախեւառաջ, Աստուած լուսաւորում, շարժման մէջ դնում եւ բարձրացնում է սրբազան Հեղինակի միտքը, որպէսզի նա հասկանայ աստուածային պատգամը, որ աւետելու է: Ըմբռնելու համար դէպքերը՝ որոնց ականատես է լինում, միշտ չէ՝ որ սրբազան Հեղինակը կարիքն ունի յատուկ մի շնորհի, թէեւ վերջինի ներկայութիւնը չի բացառում, ինչպէս մարգարէութեան պարագային: Բայց միշտ հարկաւոր է՝ որ Աստուած բարձրացնի եւ օգնի մարդկային մտքին, որպէսզի վերջինս կարողանայ դատաստաններ կայացնել ընկալուած իրողութիւնների վերաբերեալ: Աստուածային այս օգնութիւնը աստուածաբաններն անուանում են գերբնական լոյս (lumen), որը համանման է երկնային երանութեանը հասած հոգիների վառ-լի լոյսին (lumen gloriae):

Աստուածաշնչի մասնագէտների համընդհանուր կարծիքն է, որ ներշնչման լոյսը մտքին պարգեւում է աստուածային իրականութիւնները ճանաչելու մեծագոյն կարողութիւն, այնպէս՝ ինչպէս որ վառ-լի լոյսը երկնային հոգիներին ընդունակ է դարձնում ճանաչելու Աստծուն: Երկու դէպքերում էլ, աստուածային լոյսը առաւել յստակ է դարձնում ճանաչողութեան առարկան:

Մտքի վրայ գործադրուած ազդեցութիւնից բացի, հարկաւոր է հաշուի առնել աստուածային ներգործութիւնը կամքի վրայ, որպէսզի սրբազան Հեղինակները աստուածային պատգամը աւետեն բացարձակ հաւատարմութեամբ: Կամքի վրայ գործադրուած ազդեցութիւնը ներդաշնակութեան մէջ է դնում աստուածային նախաձեռնութիւնը եւ մարդկային ազատութիւնը:

Աստուածաշնչի ներշնչուածութեան բնոյթի բացատրութիւնը ամբողջացնելու համար, վերջում, հարկաւոր է յիշել սրբազան Հեղինակի գործադիր օրգանների վրայ կիրառուած գերբնական «օժանդակութիւնը», օրգաններ՝ որոնք ուղղակիօրէն ծառայում են գրքի շարագրմանը: Աստուածային այս օժանդակութիւնը տեւում է այնքան ժամանակ՝ որքան որ տեւում է գրքի շարագրումը, եւ դադարում է՝ երբ գործն աւարտւում է:

Անհրաժեշտ չէ՝ որ սրբազան Հեղինակը գիտակից լինի իր անձի եւ մտային, հոգեբանական ու ֆիզիքական կարողութիւնների վրայ կիրառուած գերբնական այս ներգործութեանը, ներշնչման պարգեւաշնորհին, այնպէս՝ ինչպէս որ անհրաժեշտ չէ՝ որ քրիստոնեան գիտակից լինի շնորհի մէջ լինելու իր վիճակին: Եկեղեցին է՝ որ առաքելութիւնն ունի զանազանելու, ճանաչելու եւ ընդունելու թէ որ գրքերն են գրուել Սուրբ Հոգու ներշնչման ներքոյ:

Եզրակացնելով, աստուածային ներգործութիւնը ազդում է սրբազան Հեղինակի ամբողջ ինքնութեան ու անձնականութեան վրայ. իր գործին մասնակից է դարձնում մարդկային էակի բոլոր կարողութիւնները, այնպէս՝ որ արդիւնքում ստացուած գործը, Աստուածաշունչը, որպէս ճշմարիտ եւ իրական Հեղինակներ ունենայ միաժամանակ Աստծուն եւ սրբազան Հեղինակին:

ԱՄԲՈՂՉ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՄԸ ՆԵՐՇՆՉՈՒՄԸ Է

Ամբողջ Աստուածաշունչը Աստծոյ գործն է, որը նրա գլխաւոր Հեղինակն է, եւ միաժամանակ գործն է սրբազան Հեղինակների, որոնք երկրորդական եւ գործիքային Հեղինակներն են: Այստեղից բխում է մի հարց. արդեօք ինչ որ մի կերպ հնարաւոր է զանազանել թէ Աստուածաշնչի հատուածներից որոնք պէտք է յատուկ կերպով վերագրուեն նրանցից իւրաքանչիւրին: Աստուածաշնչի ներշնչուածութեան այսպէս կոչուած «ծաւալման» խնդիրն է:

Պատմական կերպարանքի ներքոյ, թոյլատրուել են որոշ սխալներ՝ որոնք կամենում էին Աստուածաշնչի ներշնչուածութիւնը սահմանափակել «հաւատքին եւ բարոյականութեանը վերաբերուող հարցեր»ում, դուրս թողնելով «անցողիկ կերպով աստուածները»: Այդ սխալները մերժուել են Եկեղեցու Վարդապետութեան կողմից: Այն՝ ինչը որ բացարձակ կերպով անհնարին է անել, ներշնչուածութեան սահմանափակումն է Աստուածաշնչի որոշ հատուածներում, կամ կարծելը՝ թէ սրբազան Հեղինակը ինչ որ մի հարցում սխալուել է: Իրականում, գրքերը՝ որոնք Եկեղեցին ընդունել է որպէս սրբազան

եւ կանոնական, բոլորը՝ ամբողջովին եւ իրենց հատուածներից իւրաքանչիւրում շարադրուել են Սուրբ Հոգու ներշնչման ներքոյ:

Սրբազան գրքերի հատուածներից իւրաքանչիւրը շարադրուել է Սուրբ Հոգու ներշնչման ներքոյ եւ բնագրում գործածուած բառերը նոյնպէս ներշնչուած են Սուրբ Հոգու կողմից: Ոճի եւ արտայայտչական կերպերի թերութիւնները մատնանշում են աստուածային սքանչելի երկայնամտութիւնն ու կարեկցանքը (synkatábasis)¹, որի միջոցով Աստուած սրբազան գրքերում կամեցաւ խօսել մարդկանց հետ՝ յարմարուելով սրբազան հեղինակների մշակոյթի մակարդակին ու բնաւորութեանը, այնպէս՝ ինչպէս Մարդացած Խօսքը Իրեն միացրեց մարդկային բնութիւնը, յանձն առնելով վերջինիս սահմանները, մեղքից բացի:

Դ) ԱՍՏՈՒԱԾԱՇԱՀՆՉԻ ՃՇՄԱՐՏԱԽՕՍՈՒԹԻՒՄԻՆՆԸ

ՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՅՔ

Աստուածաշնչի ճշմարտախօսութիւնը հետեւանքն է նրա աստուածային ներշնչուածութեան

Աստուածաշնչուհը Աստուծոյ կողմից ներշնչուած գրքերի ամբողջութիւնն է, որը Եկեղեցին ընդունել է Իսրայէլի ժողովրդից եւ Առաքեալներից, որպէս ճշմարտութեան ապահով կանոն: Սրբազան գրքերը կոչուում են նաեւ «կանոնական»։ Աստուծոյ կողմից յայտնուած ճշմարտութեան «կանոն»ն են, կամ՝ «օրէնք»ը: Աստուածաշնչի ուսմունքը պարզ մարդկային ուսմունք չէ: Աստուծոյ Խօսքն է: Եկեղեցին հաւատում է՝ որ Աստուածաշնչում ուսուցանուած ամէն բան ճշմարիտ է: Աստուածաշնչի ճշմարտախօսութիւնը բխում է Աստուծոյ ճշմարտախօսութիւնից, որը նրա ներշնչողն է եւ գլխաւոր հեղինակը: Աստուածաշնչի գրքերը վստահութեամբ, հաւատարմութեամբ եւ առանց սխալի ուսուցանում են ճշմարտութիւնը, որն Աստուած, մեր փրկութեան համար, կամեցաւ որ աւանդուի նրանց միջոցով:

Աստուածաշնչի ճշմարտախօսութիւնը մի համոզում է, որը Եկեղեցին դաւանում է իր ծննդեան օրից մինչեւ մեր ժամանակները, առանց ընդհատման: Աստուածաշնչի ճշմարտախօսութիւնը պատկանում է քրիստոնէական հաւատքի աւանդին եւ բացատրում է որպէս Աստուածաշնչի աստուածային ներշնչուածութեան անհրաժեշտ հետեւանք: Ինչպէս ներշնչուածութիւնը, ճշմարտախօսութիւնը նոյնպէս տարածւում է Աստուածաշնչի **ամբողջ** բովանդակութեան վրայ, որը Հին եւ Նոր Կտակարանների սրբազան հեղինակներին ներշնչուել է Աստուծոյ կողմից: Սա մի բացարձակ ճշմարտութիւն է, որ բխում է Աստուծոյ, մարդկանց փրկութեան համար:

Ճշմարտախօսութիւնը եւ անսխալականութիւնը

Աստուած կամեցաւ սրբազան գրքերի միջոցով ուսուցանել փրկարար ճշմարտութիւնը. նրանցում չկայ ոչ մէկ սխալ, քանի որ եթէ գոյութիւն ունենար՝ վերագրելի կը լինէր Աստուծուն: Թէեւ սրբազան հեղինակները, որպէս մարդ, սահմանափակ էին եւ կարող էին սխալուել, այնուամենայնիւ, երբ գրում էին ներշնչման պարզեւաշնորհի ազդեցութեան ներքոյ, իսկապէս մղւում, լուսաւորւում եւ ստանում էին Սուրբ Հոգու օգնութիւնը, այնպէս՝ որ Աստուած Ինքն է այդ գրքերի եւ նրանցում բովանդակուած հաստատումների գլխաւոր հեղինակը: Աստուածաշնչի գրքերում անհնարին է զանազանել Աստուծուն եւ մարդկանց վերագրելի տարբեր հատուածներ, այլ

¹ Հմմտ. Սբ. Յովհան Ոսկեբերան, *Sermones in Genesim*, 17.

ամբողջը միաժամանակ Աստծոյ Խօսքն է եւ մարդկանց շարադրանքը: Սրանից հետեւում է, որ որպէս Աստուածաշնչի հաստատումներում սխալների բացակայութեան երաշխաւորող պէտք է նկատել Ինքնին Աստծուն:

Աստուածաշնչի այս որակը, նրա ճշմարտախօսութիւնը, նկատուած՝ որպէս սխալների բացակայութիւն, կոչւում է «աստուածաշնչեան անսխալականութիւն»: Այս սկզբունքը պաշտպանում է Աստուածաշունչը նրանցից՝ ովքեր պատմութեան ընթացքում ցանկացել են նսեմացնել եբրայական եւ քրիստոնէական կրօնը, հաստատելով՝ թէ իբր նրանց սրբազան գրքերը պարունակում են սխալներ եւ հակասութիւններ, որոնց պատճառով արժանի չեն ընդունուելու որպէս Աստծուց յայտնուած ճշմարտութիւն:

ՂԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՒ ԽԱՐԳԵՐԻ ԵՐԱՊԵՄԱՆ ՊԱՏԱՍԻՉՆԵՐՆ

1) Եւրդին Կարժեցեալ Հակասութիւնները:

Եկեղեցու Սուրբ Հայրերը եւ քրիստոնեայ առաջին հեղինակներն արդէն պարտաւոր եղան դիմագրաւել աստուածաշնչեան զանազան հատուածները միմեանց միջեւ ներդաշնակեցնելու դժուարութիւնները. երեւութական, կարծեցեալ տարաձայնութիւններ են հանդիպում Հին Կտակարանի որոշ հատուածների եւ Նոր Կտակարանի, ինչպէս նաեւ նորկտակարանեան գրքերի միջեւ: Այսպէս, օրինակ, ամբողջովին գիտակից էին տարբերութիւններին՝ որ գոյութիւն ունեն համաբարբառ երեք Աւետարանների եւ Յովհաննէսի Աւետարանի միջեւ, Յիսուսի հասարակաց կեանքի նկարագրութեան մէջ:

Թէեւ դժուարութիւններից իւրաքանչիւրին նրանց կողմից տրուած լուծումները չունէին քննական միեւնոյն խստութիւնը՝ որով ներկայացւում են այսօր, այնուամենայնիւ, Աստուածաշնչի աստուածային ներշնչուածութեան հաւատքի հիմքի վրայ, լուծելու համար այդ դժուարութիւնները, նրանց կողմից հաստատուել են սկզբունքներ եւ ապահով կողմնորոշումներ, որոնք օժտուած են յարատեւ վաւերականութեամբ: Սուրբ Յուստինոսը, հրեայ Տրիփոնին պատասխանելով, որը ընդդիմախօսում էր քրիստոնէական հաւատքին՝ վկայակոչելով Աստուածաշնչի ներքին կարծեցեալ հակասութիւնները, գրում է. «Երբէք չեմ համարձակուի մտածել կամ ասել թէ Աստուածաշնչի գրքերը միմեանց հակասում են: Իսկ եթէ գրքերից մէկը ինձ այդպիսին թուար, կը նախընտրէի մտածել՝ որ ես ինքս չեմ կարողանում ըմբռնել նրա նշանակութիւնը, եւ կ'աշխատէի համոզել բոլոր նրանց՝ ովքեր կասկածում են՝ թէ Աստուածաշնչում գոյութիւն ունեն որոշ հակասութիւններ, որպէսզի որդեգրէին իմ նոյն մտածելակերպը»¹:

Սուրբ Օգոստինոսը, Աւետարանների երեւութական տարաձայնութիւններին ակնարկելով, սուրբ Հերոնիմոսին ուղղուած իր երկար նամակում գրում է հետեւեալը. «Եթէ, հետեւաբար, այս գրքերում կը հանդիպեմ որոշ հատուածների, որոնք ճշմարտութեանը հակառակ լինելու տպաւորութիւնը կը թողնեն իմ վրայ, ոչ մի կասկած չեմ ունենայ՝ որ դա հետեւանքն է կա՛մ տուեալ ձեռագրի անճշտութեան, կա՛մ փաստի՝ որ թարգմանիչը չի կարողացել ճշգրիտ ըմբռնել բնագրի իմաստը, կա՛մ էլ՝ որ ես ինքս չեմ հասկացել այն»²:

2) Կարժեցեալ Հակասութիւնները Գրիգոր-Թեան Հետ:

Սուրբ Օգոստինոսը, որոշ հերետիկոսների հետ վիճաբանելիս, սահմանել է մի քանի սկզբունքներ, որոնք երբեք չպէտք է մոռանանք՝ եթէ կամենում ենք զնահատել Աստուածաշնչում բովանդակուած ճշմարտութիւնը. սրբազան գրքերի միջոցով՝ Տէրը «կամենում է մեզ քրիստոնեաներ դարձնել, ո՛չ թէ մաթեմատիկոսներ»³, եւ «Աստծոյ

¹ Սբ. Յուստինոս, *Dialogus cum Tryphone Judaeo*, 65, 2.

² Սբ. Օգոստինոս, *Epistola* 82, 1, 3.

³ Սբ. Օգոստինոս, *De Actis cum Felice Manicheo*, 1, 10.

Հոգին, որը մեզ հետ խօսել է սրբազան հեղինակների միջոցով, մտադիր չի եղել ուսուցանել մարդկանց բաներ՝ որոնք օգտակար չեն նրանց փրկութեանը»¹:

Սուրբ Օգոստինոսի եւ ուրիշ Սուրբ Հայրերի կողմից գործածուած «փրկութեան համար օգրակար» արտայայտութիւնը հարկաւոր է հասկանալ «փրկութեան համար անհրաժեշտ» իմաստով:

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԱՆՍԻԱԼԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախորդ դարերում, բազում նոր դժուարութիւններ ծագեցին Աստուածաշնչի հաստատումների եւ բնական գիտութիւնների – յատկապէս աստղագիտութեան եւ հնէաբանութեան – ճանաչողական նուաճումների միջեւ: Աստուածաշնչում ներկայացուած տիեզերքի տեսութիւնը չի համապատասխանում գիտութեան կողմից առաջարկուածի հետ. միեւնոյն բանը կարելի է ասել հանգրուանների վերաբերեալ՝ որոնցով անցել է երկրագնդի մակերեսի կազմաւորումը եւ կենդանական աշխարհի զանազան տեսակների առաջացումը: Այս եւ նմանօրինակ հարցերը քրիստոնեայ մեկնաբաններին եւ Եկեղեցու Վարդապետութեանը ընծայում են աստուածաշնչեան հաստատումների իրական նշանակութիւնը ճշտելու հնարաւորութիւնը:

1) Գալիլէոյի Գեպէը:

Տասնեօթներորդ դարում, երբ Գալիլէոն հաստատեց՝ որ երկրագունդը պտտւում է արեւի շուրջը, իր ժամանակակիցներից ոմանք այս հաստատման մէջ տեսան հակասութիւն Աստուածաշնչի հետ: Իրականում, սակայն, Գալիլէոն չէր հակաճառում Յայտնութեան ճշմարտութեանը. ընդհակառակն, իր հաստատումները արդարացնում էր՝ մէջբերելով կարգինալ Բարոնիոյի խօսքերը, որը գրում էր՝ թէ «Սուրբ Հոգին մտադիր է ուսուցանել մեզ՝ թէ ինչպէս ենք գնում Երկինք, ո՛չ թէ՝ ինչպէս է գնում Երկինքը»²:

2) Եկեղեցու Վարդապետութեան ուսմունքը:

Նախորդ դարի վերջաւորութեան, յեղաշրջական (էվոլուցիոնիստ) տեսութիւնների եւ Աստուածաշնչում յիշատակուած ու նկարագրուած քաղաքակրթութիւններին ժամանակակից եւ նոյնիսկ նրանցից աւելի հին քաղաքակրթութիւնների հնէաբանական բացայայտումների ու պեղումների դիմաց, Եկեղեցին սահմանեց հետեւեալ ուսուցումը. հարկաւոր է նախեւառաջ յիշել, որ սրբազան հեղինակները, կամ աւելի ճիշտ՝ նրանց միջոցով խօսող Սուրբ Հոգին, մտադիր չէին ուսուցանել մարդկանց այսպիսի բաներ, այսինքն՝ տեսանելի արարչութեան ներքին կազմութիւնը, բաղադրութիւնը եւ բնութիւնը, քանի որ այս տեսակ գիտելիքները ոչնչով կարելոր չեն մարդկային անձի փրկութեան համար: Այսպիսով, բնութեան բացատրութիւնը բառիս բուն իմաստով փնտռելուց աւելի՝ Աստուածաշնչի գրքերը իրականութիւնները նկարագրում կամ նրանց մասին խօսում են պատկերաւոր եւ փոխաբերական եղանակով, կամ էլ՝ գործածելով իրենց ժամանակներին յատուկ արտայայտչական կերպերը, որոնք այսօր եւս գործածւում են մեր ամէնօրեայ կեանքում, նաեւ ամենագիտուն մարդկանց կողմից:

Այլեւս դասական դարձած օրինակը. Աստուածաշնչի – ինչպէս նաեւ բոլոր հին քաղաքակրթութիւնների – տիեզերաբանական տեսութեան համաձայն, երկիրը համարւում է տիեզերքի կենտրոնը, որի շուրջը պտտւում են արեւը, լուսինն ու աստղերը: Այսօր գիտութիւնը փաստում է՝ որ այդպէս չէ. սրանից չի հետեւում, սակայն, որ կարող ենք Աստուածաշնչին մեղադրել սխալի մէջ, որովհետեւ Աստուածաշունչը, մի կողմից, աստղագիտութեան դասագիրք չէ եւ չի յաւակնում այդպիսին լինել կամ գիտականօրէն

¹ Սբ. Օգոստինոս, *De Genesi ad Litteram*, II, 9, 20.

² *Lettera alla serenissima madonna la Granduchessa Madre*, in *Le Opere di Galileo*, Ed. Nazionale, Firenze 1895, v. V, p. 319.

բացատրել այդ հարցերը. իսկ միևս կողմից, սրբազան հեղինակն արտայայտում է՝ յարմարուելով իր ժամանակուայ մշակութային եւ խօսակցական մակարդակին, ըստ որի՝ ասում է այն՝ ինչ երեւում է զգայարաններին, ինչպէս վարւում ենք նաեւ մենք այսօր: Օրինակ, ասում ենք. «Արեւը մայր մտաւ լեռների ետեւում» կամ «ծովի ջրերի մէջ»:
Զգայարանները չեն սխալւում իրենց ընկալումներում, թէեւ գիտական բացատրութիւնը յետագայում ներկայացնում է իրողութիւններ՝ որոնք ընկալելի չեն անգէն աչքով: Աստուած մարդկանց ձեռքերին է յանձնել բնութեան կառուցուածքի եւ նրա օրէնքների գիտական բացատրութեան պարտականութիւնը:

Աստուածաշունչը կրօնական գիրք է, ո՛չ թէ գիտական հանրագիտարան, բայց նաեւ երբ նրանում հանդիպում են նիւթեր՝ որոնք ուղղակիօրէն վերաբերւում են վերոյիշեալ գիտութիւններին, այդ հաստուածները նոյնպէս շարագրուած են աստուածային ներշնչման ներքոյ, ինչպէս կրօնական կամ բարոյական նկարագիր ունեցող հաստուածները: Աստուածաշնչի ամբողջ բովանդակութիւնը ներշնչուած է Աստուծոյ կողմից: Երբ խօսում է մարդկանց, Աստուած յարմարւում է մարդկային մշակոյթի մակարդակին եւ սրբազան հեղինակների լեզուական կերպին, որոնք գործում են որպէս գործիքներ՝ որպէսզի մինչեւ մեզ հասնի աստուածային Յայտնութիւնը: Աստուծոյ Խօսքն, այսպիսով, միաժամանակ նաեւ մարդկային խօսք է, մարդկանց կողմից ընկալելի եւ ըմբռնելի: «Աստուածաշնչում», գրում է Սուրբ Թովմասը, «աստուածային իրականութիւնները մեզ տրւում են այնպէս՝ ինչպէս որ սովորական է մարդկանց համար»¹: Աստուծոյ կողմից այս «խոնարհուելը» մինչեւ մարդկային վիճակն ու մակարդակը այն է՝ ինչը որ Սուրբ Հայրերը կոչում են «աստուածային երկայնամտութիւն» կամ «կարեկցանք», յունարէն՝ *synkatábasis*:

Աստուածային «երկայնամտութեան» սկզբունքը կարեւոր է՝ հասկանալու համար Աստուածաշնչի ճշմարտախօսութեան կերպը: Սուրբ Հայրերից, այս սկզբունքը պաշտպանեց եւ տարածեց Սուրբ Յովհան Ոսկեբերանը. նրա միջոցով, «աստուածային երկայնամտութեան» ուսմունքը մտաւ սրբազան Աւանդութեան մէջ, որին հետեւելով՝ Եկեղեցու Վարդապետութիւնն ուսուցանում է. «Ինչպէս Հօր համագոյակից Որդին ամէն ինչով նման դարձաւ մարդկանց, մեղքից բացի, այնպէս էլ՝ մարդկային լեզուներով արտայայտուած Աստուծոյ խօսքերը ամէն ինչով նման դարձան մարդկային խօսելակերպին, սխալից բացի»:

ԱՍՏՈՒԱԾԱՆՉԻ ԴՇՄԱՐՏԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԴՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Թէեւ բնական գիտութիւնների վերաբերեալ ներկայացուած սկզբունքները կարող են կիրարկուել նաեւ պատմական իրադարձութիւններին վերաբերուող հարցերում, այնուամենայնիւ, կարեւոր է յիշելը՝ որ մինչ բնութեան եւ նրա օրէնքների շուրջ գիտական բացատրութիւնների ճանաչումը անհրաժեշտ չէ մարդու յաւիտենական փրկութեան համար, գոյութիւն ունեն պատմական բնոյթի որոշ իրադարձութիւններ՝ որոնք կազմում են աստուածաշնչեան հաւատքի հիմքը, լինի հրեայ ժողովրդի՝ թէ Յիսուս Քրիստոսի Եկեղեցու համար: Խօսքը վերաբերւում է Փրկութեան Պատմութիւնը հիւսող իրադարձութիւններին, ինչպիսիք են Աստուծոյ կողմից աշխարհի եւ մարդու արարումը, նախածնողների անկումը, Իսրայէլի ժողովրդի աստուածային ընտրութիւնը, Մովսէսի հետ Ուխտը, Յիսուս Քրիստոսի մարդեղութիւնը, մահն ու յարութիւնը, Սուրբ Հոգու գալուստը եւ Եկեղեցու ծնունդը: Եթէ բնական գիտութիւններին վերաբերուող հարցերում հնարաւոր է հաստատել՝ որ դրանք Աստուածաշնչում ներկայացւում են ըստ անգէն զգայարանների ուղղակի ընկալման, պատկերաւոր եւ փոխաբերական եղանակով — եւ սրանում սխալ չկայ — միեւնոյնը անհնարին է հաստատել պատմական բնոյթի հարցերի վերաբերեալ, որովհետեւ պատկերաւոր եւ փոխաբերական եղանակով նկարագրուած պատմութիւնը իրական պատմութիւն չէ այլեւս, այլ՝ յօրինուածք:

¹ Սբ. Թովմաս Աքուինացի, *Super Epistolam ad Hebraeos lectura*, 1, 4.

Աստուածաշնչի պատմականութեան բնութագրումը

1) Արօնական պարմո-թիւն է :

Աստուածաշնչում ներկայացուած Փրկութեան Պատմութեան ուսումնասիրման ընթացքում, հարկաւոր է միշտ ի նկատի ունենալ՝ որ Աստուածաշունչը հետեւում է դատանիչների՝ որոնք տարբերում են մեզ ժամանակակից պատմաբանների դատանիչներից: Աստուածաշնչեան պատմութիւնը նախեւառաջ կրօնական նկարագիր ունեցող պատմութիւն է, հաւատքի լոյսի ներքոյ տեսնուած, որին մասնակցում է մի դերակատար՝ որի գործունէութիւնը գերազանցում է պատմական փաստարկումներին. այդ դերակատարը Աստուած ինքն է: Սրբազան հեղինակները, որոնք նկարագրում են Իսրայէլի ժողովրդի, կամ Յիսուս Քրիստոսի, կամ էլ նորածին Եկեղեցու պատմութիւնը, իրադարձութիւնները ներկայացնում են ոչ միայն որպէս պատմական դէպքեր, այլ նաեւ տալիս են Աստուծոյ ներգործութեան հանդէպ հաւատքով լուսաւորուած նրանց բացատրութիւնը:

Հետեւեալ օրինակը կարող է բաւական յստակութիւն մտցնել գաղափարների մէջ. հրեայ ժողովրդի ծագումը արդի պատմագիտութեան առարկան է եւ մասնագէտները համաձայն չեն՝ թէ Իսրայէլի ժողովրդի առաջացումը արդեօք հարկաւոր է տեղադրել Ք.ա. 12րդ դարի մօտակայքում, երբ տեղի ունեցաւ տասներկու տոհմերի միաւորումը Քանանում, թէ՞ ժողովուրդը ամբողջովին կազմաւորուել էր դրանից առաջ արդէն, Եգիպտոսից ելքի ժամանակ, Մովսէսի ու Յեսուի առաջնորդութեամբ, կամ տակաւին՝ արդեօք պէ՞տք է նրա արմատները փնտռուեն Ք.ա. 19րդ դարում ապրող նահապետական քոչուոր ցեղախմբերում: Աստուածաշունչը այս խնդիրը ներկայացնում է մէկ ա՛յլ տեսանկիւնից դիտուած. Իսրայէլը պատմութիւնից ներս մտնում է Աստուծոյ յատուկ միջամտութեան հետեւանքով, որը կամենում է կազմաւորել միւսներից տարբեր մի ժողովուրդ: Այս ծրագիրը իրագործուում է յաջորդական միջամտութիւնների միջոցով, որոնք սկսւում են Աբրահամի կոչումով եւ որոնք իրենց արմատները գտնում են մարդու արարման մէջ: Այսպիսով, թէեւ յստակ կերպով չի պատասխանում Իսրայէլի առաջացման վերաբերեալ արդի պատմաբանների հարցադրումներին, Աստուածաշունչը ներկայացնում է ճշմարտութիւնը. Իսրայէլը որպէս ժողովուրդ կազմաւորուել է Աստուծոյ նախաձեռնութեամբ եւ իրեն որպէս նախահայրեր ունի Աբրահամին, Նահապետներին, Մովսէսին եւ բոլոր նրանց՝ ովքեր կնքեցին Սիւքէմի դաշինքը, որի մասին պատմում է Յեսուի գրքի 24րդ գլխում:

2) Նպարակամողո՞ւած է- ընդրո՞ւած պարմո-թիւն է :

Աստուածաշնչեան պատմութիւնը, ունենալով կրօնական բնոյթ, անշուշտ նպարակամողո՞ւած պատմութիւն է, բայց այս պատճառով չի դադարում իրական եւ ճշմարիտ պատմութիւն լինելուց: Իրադարձութիւնների մեկնաբանումը հաւատքի լոյսի ներքոյ, չի կաղապարում եւ չի կեղծում դրանք, այլ ներկայացնում է այնպէս՝ ինչպէս որ են, տալով նրանց ուղիղ բացատրութիւնը: Արդիւնքում ստացւում է մի ընդրո՞ւած պատմութիւն, այսինքն՝ որը չի նկարագրում ամբողջը, այլ միայն այն՝ ինչը որ կարեւոր է մատնանշելու համար կերպը՝ որով Աստուած միջամտում է տուեալ պատմութիւնից ներս, հնարաւորութիւնը ստեղծելով նշմարելու՝ թէ Աստուած ինչպէս է գործելու ապագայում:

Պատմութիւնը ներկայացնելու գանազան կերպերը

Ընդգծեցինք աստուածաշնչեան պատմութեան բնորոշ յատկութիւններից մի քանիսը, որոնք պէտք է հաշուի առնուեն՝ Աստուածաշունչը ճիշտ հասկանալու համար. սակայն, սրբազան գրքերի հատուածներից իւրաքանչիւրը ներկայացնում է իւրօրինակ յատկութիւններ, որոնք հարկաւոր է ուշադիր քննել՝ ըմբռնելու համար սրբազան հեղինակի դիտաւորութիւնը, այսինքն՝ թէ ինչ է կամենում ասել: Միշտ չէ՞ որ գործածուում

է ասելու կամ ներկայացնելու միեւնոյն կերպը. սա կախում ունի հեղինակից, նրա մշակութային միջավայրից եւ օգտագործած գրական կերպից: Այսպէս, օրինակի համար, Մենդոցի առաջին գլուխներում նկարագրուած աշխարհի եւ մարդու արարման պատմութեան գրական կերպը ամբողջովին տարբերուած է Եգիպտոսից ելքի պատմութեան շարադրման ժամանակ գործածուածից, որը դիւցազներգական երանգաւորուած ունի:

Քանի որ պատմական ճշմարտութիւնը Աստուածաշնչի հատուածներից իւրաքանչիւրում չի ներկայացուած միակերպ, Եկեղեցին ուսուցանում է՝ որ Աստուածաշնչի ներշնչուածութիւնը ճիշտ հասկացողներից ոչ ոք չի կարող զարմանալ՝ որ սրբազան հեղինակների մօտ, հին դարերի ուրիշ շատ հեղինակների նմանութեամբ, հանդիպում ենք ներկայացնելու եւ նկարագրելու որոշ արուեստների, որոշ իւրայատկութիւնների, որոնք բնորոշ են յատկապէս սեմական լեզուներին եւ որոնք կոչուած են «Երջնեց»-մեք, խօսակցութեան մէջ գործածուած մեծաբանութիւնների եւ, երբեմն, մինչեւ իսկ որոշ առեղծուածների, որոնք բոլորն էլ հին ազգերի հեղինակներին օգնում էին մեծագոյն հաստատութեամբ տպաւորել իրենց պատգամները ունկնդիրների մտքում:

Աստուածաշնչում նկարագրուած իրադարձութիւններից ոմանք, որոնք կապ ունեն պատմական բնոյթի հարցերի հետ, ինքնըստինքեան ստուգելի են պատմական գիտութիւններին յատուկ գործելակերպով: Խօսքը վերաբերում է զուտ պատմական դէպքերին. գիտութիւնն այսօր իր տրամադրութեան ներքոյ ունի գիտական տուեալներ՝ որոնք հնարաւոր են դարձնում այդ դէպքերի ստուգումը: Այսուհանդերձ, պատմական բնոյթի որոշ իրադարձութիւններ ինքնըստինքեան ստուգելի չեն միմիայն պատմական գիտութիւններին յատուկ գործելակերպով. այսպէս, ստուգելի են Ղազարոսի կամ Նախնի այրի կնոջ որդու յարուստեան պատմութիւնները, Յիսուսի դատարկ գտնուած գերեզմանի փաստը կամ յարուցեալ Յիսուսի յայտնութիւնների ականատեսների պատմականօրէն հաւաստի վկայութիւնները. բայց յարուցեալ եւ փառաւորեալ Յիսուսի Անձը վերանցական է եւ գերազանցում է պատմական գիտութիւնների դատանիչներին ու գործելակերպին: Յարուցեալ Յիսուս, օրինակ, այլեւս չի կարող առարկան լինել զանգուածային ստուգման, ինչպէս որ էր իր մահից եւ յարութիւնից առաջ, կամ ինչպէս որ Ղազարոսն էր իր յարութիւնից յետոյ. եթէ Ղազարոսի պարագային «յարութիւն» եզրը նշանակում է «վերակենդանացում», այսինքն՝ վերադարձ նախկին կեանքին, որը մի օր կրկին վերջանալու էր, նոյնը չէ Յիսուսի յարութեան պարագան, որն անցումն է յաւիտենական փառաւորեալ կեանքին: Այս իրադարձութիւնները գերազանցում են պատմական գիտութիւնների դատանիչներին ու գործելակերպին, բայց այս պատճառով նուազ ճշմարիտ չեն, ո՛չ էլ միւսներից նուազ պատմական: Կարող են կոչուել զանազան անուններով. արդի հեղինակներից ոմանք այս իրադարձութիւններն անուանում են «պատմազանցական» (մետաստորիկ). Եկեղեցին, իր կողմից, պաշտօնական ոչ մի անուն կամ որակաւորում չի սահմանել՝ մատնանշելու համար պատմական իրականութիւնը կամ ճշմարտախօսութիւնը: Պատմական գիտութիւնների սահմանափակ դատանիչներին գերազանցելով, այս իրադարձութիւնները մաս են կազմում հաւատքի «Գո-գո-թի-նն-երջն», որը հիմնուած է ոչ միայն մարդկային ուսումնասիրութիւններով ճշտուելի տուեալների, այլ յատկապէս յայտնող Աստուծոյ հեղինակութեան վրայ:

Ահա այս կէտում է կայանում անհաւատների զգացած դժուարութիւնը, երբեմն՝ դայթակղութիւնը. այն փաստում, այսինքն, որ Աստուածաշունչը հաստատում է պատմական նկարագիր ունեցող ճշմարտութիւններ, որոնք սակայն գերազանցում են մարդկային ուսումնասիրութիւնների դատանիչներին ու գործելակերպին: Քրիստոնէական հաւատքը հաւատացալներին պարգեւում է այս պատմութիւնների ճշմարտութեան բացարձակ վստահութիւնը, պատմութիւններ՝ որոնք փրկութեան ճշմարտութիւնների անհրաժեշտ հիմքն են: Անհաւատ անձինք պարտաւոր են յարգանքով մօտենալ այս իրադարձութիւնների ականատես վկաների լրջութեանն ու անկեղծութեանը, ինչպէս նաեւ Եկեղեցուն՝ որ պաշտպանում է այդ վկայութիւնները. յարգելով հաւատքը պաշտպանողների արժանապատուութիւնը, հաշուի առնելով՝ որ գիտական եւ բարոյական միջոցներով անհնարին է ժխտել հաւատքի ուսուցումները, ինչպէս նաեւ ուշադրութիւն դարձնելով հաւատքի ուսուցումների բանական լինելուն:

Ինչ վերաբերում է չորս Աւետարանների պատմական ճշմարտախօսութեանը, այս հարցին կ'անդրադառնանք աւելի ուշ:

ԱՍՏՈՒԾԱԾԱՇՆՉԻ ԱՆՍԽԱԼԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲՆՈՅԹԻ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Աստուածաշնչեան սրբութիւնը

Փրկութեան Պատմութեան կողքին, Աստուածաշունչը ուսուցանում է նաեւ բարոյական նկարագիր ունեցող ճշմարտութիւններ. մարդկային վարքի կանոններ՝ որոնք համապատասխանում են մարդու արժանապատուութեանը եւ Աստծոյ ծրագրերին: Աստուածաշնչի ճշմարտախօսութիւնը եւ անխալականութիւնը, այս տեսանկիւնից դիտուած, անուանում է «սրբաշնչեան սրբութիւն», որը մարդուն ցոյց է տալիս՝ թէ ինչպիսի կենցաղավարութեամբ է պարտաւոր ապրել Աստծոյ առաջ:

Պատանիչներ՝ հնարաւոր դժուարութիւնները լուծելու համար

Այս մարդու եւս կարող են ի յայտ գալ որոշ դժուարութիւններ, յատկապէս Հին Կտակարանի օրէնքներից մի քանիսի վերաբերեալ, երբ դրանք համեմատութեան մէջ են դրւում նորկտակարանեան բարոյականութեան հետ: Մշտապէս հաշուի առնելիք սկզբունքը աստուածաշնչեան Յայտնութեան «սրբաշնչեան» նկարագիրն է. Աստուած, որպէս իմաստուն մանկավարժ, մարդկութիւնից երբեք չի պահանջել նրա ուժերից վեր մի բան: Սա աստուածային երկայնամտութեան (synkatábasis) հետեւանքներից մէկն է: Այսպիսով, օրինակի համար, հասարակական (սոցիալ) բարոյականութեան ասպարէզում մեծ յառաջադիմութիւն պէտք է համարել մովսէսական Օրէնքից ներս մուծուած փոխադարձ պատժի սկզբունքը. «աչք՝ աչքի փոխարէն, ատամ՝ ատամի փոխարէն» սկզբունքը սահմանափակում էր վրէժխնդրութեան անվերջանալի փոխհատուցումներն ու արիւնհեղութիւնները, որոնք սովորական երեւոյթներ էին Միջին Արեւելքի հնադարեան քոչուոր ու կիսաքոչուոր ժողովուրդների մօտ, որոնցից սերել էր նաեւ հրեայ նահապետների ժողովուրդը: Հաւասարակշռուած փոխհատուցման օրէնքը արդարադատական մեծ յառաջադիմութիւն էր՝ վրիժառութեան դաժան սովորոյթների համեմատ, որը սահմանում էր՝ որ պատիժը չէր կարող յանցանքից աւելի մեծ լինել: Նմանապէս, ամուսնալուծութեան վերաբերեալ մովսէսական Օրէնքի կաշկանդող եւ սահմանափակիչ կանոնները իրականում պաշտպանում էին այդ ժամանակուայ կնոջ հասարակական դիրքն ու վիճակը: Կամաց կամաց հեռացնելով բազմակնութիւնը, նախապատրաստուած էր ճանապարհը դէպի միակնութիւն եւ տղամարդու ու կնոջ իրաւունքների հաւասարութիւն: Այսպիսով, իսրայէլեան բարոյականութեան ամենատարրական հանգրուաններից մինչեւ աւետարանական սրբութիւնը, աստուածաշնչեան Յայտնութիւնը քայլել է այն երկար ճանապարհով՝ որը անցնում է աստուածաշնչեան պատմութեան նախնական անկատարութիւնից մինչեւ բարոյական սրբութեան վերջնական կատարելութիւնը, որն ապրել եւ ուսուցանել է Յիսուս Քրիստոս:

Մշտապէս հաշուի առնելիք սկզբունքներից միւսն այն է, որ Աստուածաշունչն իրենում պարունակում է ընտրեալ ժողովրդի եւ նրա գլխաւոր անձնաւորութիւնների կրօնական աստիճանաբար զարգացող փորձառութիւնը, մինչեւ Յիսուս Քրիստոսին հասնելը: Բայց ոչ մի մարդ սուրբ չէ: Միմիայն Աստուած է սուրբ: Այս իսկ պատճառով, Իսրայէլի մեծագոյն նահապետները, մարգարէները եւ թագաւորները եւս ունեցել են իրենց թերութիւններն ու անկումները: Աստուածաշնչում Աստուած ուսուցանում է սրբութեան ճանապարհը, ընթացքը, ո՛չ միայն որոշ անհատների հերոսական առաքինութիւնների օրինակներով, այլ նաեւ նրանց տկարութիւններով,

սահմանափակումներով եւ մոլորութիւններով: Աստուածաշնչում ներկայացւում են մարդկային արարքներ եւ զգացումներ, որոնք թէեւ երբեմն յստակ կերպով չեն որակաւորուում, այնուամենայնիւ՝ ընթերցողի համար ստեղծում են դրանց վերաբերեալ բարոյապէս ուղիղ դատաստան կայացնելու հնարաւորութիւնը:

Իսկ դժգոհ արարքները, որոնք ներկայացւում են որպէս Աստուծոյ կողմից պատուիրուած – օրինակի համար՝ *Գեղեմի* օրէնքը, որը հրամայում էր բնաջնջել գրաւուած քաղաքները – պէտք է հասկացուեն ամէն ինչի եւ սովորութիւններից իւրաքանչիւրի ծնունդը Աստուծոյ վերագրելու ձգտման լոյսի ներքոյ, ինչպէս նաեւ որպէս միջոց՝ որի շնորհիւ ընտրեալ ժողովուրդը կարող էր հեռու մնալ կռապաշտ ժողովուրդների վարակից, անաղարտ պահելով Սիրնայում յայտնուած միաստուածութիւնը:

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԱՆՍԽԱԼԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թէեւ Աստուածաշունչը մարդաբանութեան դասագիրք չէ, այն իմաստով՝ որ իր նպատակներին մաս չի կազմում մարդու բնութեան կամ էութեան ուղղակի բացատրումը, այսուհանդերձ՝ իրենում պարունակում է հիմնական բոլոր տուեալները՝ որոնք մարդը պարտաւոր է ճանաչել իր փրկութեան համար: Այս ճշմարտութիւնները ներկայանում են մշակութային եւ գրական այն պաշարներին համապատասխան, որոնց մարդկութիւնը տիրապետում էր սրբազան հեղինակների ապրած ժամանակ, բայց Աստուծոյ ներշնչուած նրանց ուսուցումը պահպանում է իր յարատեւ արժէքը: Յիշենք, որպէս օրինակ, մարդկային անձի արժանապատուութեան մասին ուսուցումները, մարդու՝ որը ստեղծուած է Աստուծոյ պատկերով ու նմանութեամբ եւ երկրագնդի վրայ զբաղեցնում է արարչութեան տիրոջ տեղը. ուսուցումները տղամարդու եւ կնոջ հաւասար արժանապատուութեան եւ ամուսնութեան սկզբնական իրական նշանակութեան մասին. չմոռանանք մահից յետոյ հոգու գոյատեւման մասին ուսուցումները: Եթէ մարդը չճանաչէր այս եւ այսպիսի ուրիշ շատ ճշմարտութիւնները, այն ստուգութեամբ՝ որը նրան տալիս է աստուածային Յայտնութիւնը, ենթակայ կը լինէր մտային մթազնումների – նաեւ նուաստացման – ինչպէս բազում անգամներ տեղի է ունեցել պատմութեան ընթացքում:

Մարդաբանական բնոյթի ճշմարտութիւնները նոյնպէս, Աստուածաշնչում յայտնուել են աստիճանաբար:

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԱՆՍԽԱԼԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աստուածաշնչի ճշմարտութիւններից ամենակարեւորը Աստուծոյ բնութեան կամ էութեան եւ մարդկանց հետ Նրա ունեցած յարաբերութիւնների մասին ուսուցումն է: Սրբազան Գրքերի միջոցով, Աստուած խօսում է իր մասին, մարդկանց կանչելով ապրելու իր հետ հաղորդակցութեան մի կեանք: Այստեղ նոյնպէս, Աստուծոյ խօսքը արտայայտուել է մարդկանց համար հասկանալի ձեւով: Այլ կերպ չէր կարող պատահել, քանի որ ամէնուր ի զօրու է աստուածային երկայնամտութեան սկզբունքը: Ահա այս պատճառով է, որ Աստուածաշնչում երբեմն հանդիպում են Աստուծոյ վերագրուած մարդանմանութիւններ, որոնք հարկաւոր է մեկնաբանել՝ հետեւելով աստուածաշնչեան մեկնողական գիտութիւնների դատանիչներին:

Ե) ԱՍՏՈՒՄԾԱՇՆՉԻ ԿԱՆՈՆԸ

ԻՆՉ Է ԿԱՆՈՆԸ

«Կանոն» եզրը առաջացել է յունարէն «kanón»-ից, որն էլ իր հերթին առաջացել է սեմական «qaneh» բառից: Իր սկզբնական իմաստով, նշանակում է «ձող» կամ «եղէգ», բայց ծառայում էր նաեւ որպէս երկարութեան չափման միակոր: Այս գաղափարից էլ յետագայում առաջացել է «չափ» կամ «օրէնք» նշանակութիւնը, այսինքն՝ վարքի եւ գործունէութեան օրէնք կամ կանոն: Կարող է կիրարկուել նաեւ բարոյականութեանը, գրականութեանը եւ արուեստին վերաբերող հարցերում. գոյութիւն ունեն ճարտարապետական եւ երաժշտական կանոններ: Կարող է նշանակել նաեւ ցանկ, ցուցակ: Պօղոս Առաքեալն այս եզրը գործածում է «քրիստոնէական կեանքի կանոն» իմաստով, Գղղ 6, 16 հատուածում:

Եկեղեցում, ամենավաղ ժամանակներից սկսած, «կանոն» եզրը գործածւում էր՝ մատնանշելու համար Աւանդութեան օրէնքը կամ Յայտնութեան պարունակութիւնը: Գործածւում էր նաեւ մատնանշելու համար Եկեղեցու բարձրագոյն իշխանութեան կողմից սահմանուած սկզբունքները կամ օրէնքները, այսինքն՝ Տիեզերական Ժողովների դաւանական սահմանումները (դոգմա):

Աստուածաշունչը բոլոր քրիստոնեաների համար միշտ եղել է հաւատքի եւ կեանքի օրէնքը, եւ ամենահին ժամանակներից սկսած՝ «կանոն» է կոչուել ներշնչուած գրքերի ամբողջութիւնը, որովհետեւ նրանցում են բովանդակուած հաւատքի եւ բարոյականութեան հիմնական սկզբունքները: Չորրորդ դարում, սկսեց «Աստուածաշնչի կանոն» անուանուել սրբազան գրքերի ցանկը: Եկեղեցին, Սուրբ Հոգու օգնութեամբ եւ օծանդակութեամբ, սահմանեց՝ թէ որոնք են սրբազան գրքերը եւ որոնք որպէս այդպիսիք պէտք է մաս կազմեն Աստուածաշնչի կանոնին: Այդ գրքերը կոչուեցին «կանոնական գրքեր» եւ ունեն կանոնական նկարագիր, այսինքն՝ ճանաչուած են որպէս Սուրբ Հոգու ներշնչման ներքոյ շարադրուած, իրենց որպէս հեղինակ ունեն Աստծուն եւ որպէս այդպիսիք են յանձնուել Եկեղեցուն:

ԴԱՏԱՆԻՇՆԵՐԸ՝ ՈՐՈՆՅ ՀԵՏԵԻԵԼ Է ԵԿԵՂԵՑԻՆ ՍՐԲԱԶԱՆ ԳՐՔԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼԻՍ

Եկեղեցին չի յօրինել աստուածաշնչեան կանոնը. ճանաչել եւ սահմանել է այն, Սուրբ Հոգու օգնութեամբ եւ օծանդակութեամբ: Երբ յայտարարում է՝ թէ որոնք են սրբազան գրքերը եւ սահմանում է աստուածաշնչեան կանոնը, կիրարկում է անխալական Վարդապետութեան իշխանութիւնը, որն իրեն տրուել է Քրիստոսի կողմից:

Ինչ վերաբերւում է Աստուածաշունչը կազմող գրքերի ներշնչուածութիւնն ու կանոնականութիւնը սահմանելու համար Եկեղեցու կողմից որդեգրուած դատանիչներին կամ սկզբունքներին, հարկաւոր է գանազանութիւն մտցնել Հին եւ Նոր Կտակարանների միջեւ: Հին Կտակարանի պարագային, Յիսուս եւ Առաքեալները գործածել են Իսրայէլի սրբազան գրքերը, ընդունելով եւ ճանաչելով դրանք որպէս Աստուծոց ներշնչուած¹. այս եզրակացութեանը կարելի է հանգել՝ ուշադրութիւն դարձնելով նաեւ այն արտայայտութիւններին, որոնք Յիսուսի կեանքի յատկանշական հանգրուանների վերաբերեալ հաստատում են՝ թէ պէտք է որ կատարուէր այն «ինչ գրուած է»²: Նոր Կտակարանում նաեւ ասուում է՝ թէ «Գրքերում Սուրբ Հոգու կողմից կանխաւ ասուել է

¹ Հմմտ. Մրկ 7, 13; Հռմ 3, 2

² Հմմտ. Մտթ 21, 42; 26, 24.31.54.56; Ղուկ 4, 21; 18, 31; Թվհ 5, 34-39; ...

Դաւթի բերանով»¹, թէ Աստուած «իր մարգարէների միջոցով խոստացել էր Սուրբ Գրքերում»², եւ թէ «Սուրբ Հոգին ասաց Եսայի մարգարէի բերանով»³:

Եկեղեցին հետեւել է Առաքեալների Աւանդութեանը եւ որպէս ներշնչուած է ընդունել Հին Կտակարանի սրբազան գրքերը, որոնք գործածուել են Յիսուսի եւ Առաքեալների կողմից:

Ինչ վերաբերում է Նոր Կտակարանի կանոնի կազմաւորմանը, գործընթացը մի քիչ տարբեր եղաւ: Առաքեալները, Սուրբ Հոգու ներգործութեան շնորհիւ, քարոզչութեամբ հաւատարմօրէն աւանդեցին այն՝ ինչ Տէրը արել կամ ուսուցանել էր: Որոշ ժամանակ անց, Առաքեալներից եւ նրանց շրջապատից ոմանք, միեւնոյն Հոգուց ներշնչուած, գրաւոր շարադրեցին սկզբնական քարոզչութեամբ աւանդուածը: Եկեղեցիներից իւրաքանչիւրը Առաքեալներից ստանում էր կանոններ, խորհուրդներ եւ ուսուցումներ, Նամակներ՝ որոնք ընթերցւում էին ծիսական արարողութիւնների ժամանակ, այնպէս՝ ինչպէս ընթերցւում էին հինկտակարանեան գրութիւնները:

Պետրոս Առաքեալը վկայում է՝ թէ ինչպէս էին հաւասար արժանապատուութիւն վայելում նորկտակարանեան գրութիւնները հինկտակարանեանների հետ. իր Ընդհանրական երկրորդ Նամակում, խօսում է Պօղոս Առաքեալի Նամակների մասին եւ դասում է դրանք «միւս Գրութիւնների» շարքին⁴: Պօղոս Առաքեալն իր հերթին գովում է թեազոնիկեցիներին, որովհետեւ իր քարոզչութիւնն ընդունել էին «ո՛չ որպէս մարդկային խօսք, այլ՝ ինչպէս որ է իրականում. որպէս Աստծոյ Խօսք»⁵: Նորկտակարանեան գրութիւնները ընդօրինակւում եւ փոխանցւում էին բոլոր համայնքներին⁶. մեծարւում եւ պահպանւում էին իւրայատուկ հոգատարութեամբ, որովհետեւ պատկանում էին Առաքեալներին կամ նրանց ամենամօտ գործակիցներին, ինչպիսիք էին, օրինակ, Մարկոսը՝ «Պետրոսի թարգմանը» եւ Ղուկասը՝ Պօղոսի «թանկագին բժիշկը»⁷:

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԿԱՆՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հին Կտակարան

Հագիւ թէ Իսրայէլի ազգատոհմերը Սինայի Ուխտի շնորհիւ միաւորուեցին՝ կազմաւորելով Աստծոյ ժողովուրդը, նախահայրերի աւանդութիւնները, մարգարէների օրէնքները եւ յաջորդական պատգամները կամաց կամաց ի մի հաւաքուեցին, խմբագրուեցին եւ գրաւոր շարադրուեցին: Այսպիսով, աստուածային ներշնչման ներքոյ, սկիզբ առաւ պատմական–կրօնական եւ բարոյական մի գրականութիւն, որում նկարագրւում են նահապետների կեանքը, Մովսէսի պատմութիւնը, խոստացուած երկրի նուաճումը, միապետութեան ծնունդն ու զարգացումը մինչեւ տապալումը, եւ այլն: Այսպիսով ի յայտ են գալիս Հնագամատեանի գրքերը – Մնդոց, Ելից, Ղեւտացոց, Թուոց եւ Երկրորդումն Օրինաց – ապա Յեսուի, Դատաւորների, Հռութի, Սամուէլի Առաջին եւ Երկրորդ, Թագաւորների Առաջին եւ Երկրորդ գրքերը. վերոյիշեալ գրքերից մի քանիսն իրենցում պարունակում են հնագոյն – լինի բանաւոր՝ թէ գրաւոր – աւանդութիւններ եւ աղբիւրներ:

¹ Գործք 1, 16

² Հւմ 1, 2; Հմմտ. նաեւ Գործք 3, 18. 21

³ Գործք 28, 25

⁴ 2Պտ 3, 16

⁵ 1Թղ 2, 13

⁶ Հմմտ. Կող 4, 16

⁷ Հմմտ. Կող 4, 14

Փրկուածեան պատմութեան գրականութեան կողքին, ի յայտ եկաւ մարգարէական գրականութիւնը, որի մի մասը կցուեց պատմական գրքերին, ինչպէս Նդիայի եւ Նդիսէի կեանքն ու պատգամները: Սրանցից ժամանակագրական առումով առաջինը Ամոսի գիրքն է, որում բովանդակուած են Ք.ա. Տրդ դարում արտասանուած մարգարէութիւններ: Զանազանուած են մարգարէների երեք խմբեր, որոնք պատկանում են միմեանց յաջորդող տարբեր դարաշրջանների. Տրդ դարին, Ամոսից բացի, պատկանում են Ովսէէն, Միքիէն եւ Եսային. 7-6րդ դարերին՝ Սոփոնիան, Նաումը, Ամբակումը եւ Երեմիան. բաբելոնեան աքսորի ժամանակ՝ Եզեկիէլը. աքսորից յետոյ՝ Անգէոսը, Զաքարիան, Մաղաքիան, Յովնանը, Յովէլը եւ Աբդիան, որոնք պատկանում են 6-4րդ դարերին: Ինչ վերաբերւում է Սաղմոսներին, նրանց մեծամասնութիւնը գրուել է դաւթեան միապետութիւնից մինչեւ բաբելոնեան աքսորից յետոյ ընկած ժամանակամիջոցում:

Բաբելոնեան աքսորից յետոյ գրւում են միւս պատմական գրքերը. Մնացորդաց Առաջին եւ Երկրորդը, Եզրասը եւ Նէէմիան: Այս դարաշրջանում զարգանում է մի ա՛յլ տեսակի գրականութիւն, իմաստասիրականը, որը ծնունդ էր առել Սողոմոնի օրօք, բայց իր գազաթնակէտին հասնում է աքսորին յաջորդող տարիներում: Արդէն յիշուած Սաղմոսների գրքից բացի, այս խմբին են պատկանում Առակների, Յոբի, Երգ Երգոցի, Ժողովողի, Սիրաքի եւ Իմաստութեան գրքերը: Այս դարաշրջանին են պատկանում նաեւ Տովբիթի, Յուդիթի եւ Եսթերի գրքերը: Պատմական գրքերի խումբը եզրափակւում է Մակաբայեցիների Առաջին եւ Երկրորդ գրքերով: Թէեւ դասւում է մարգարէական գրքերի շարքում, Դանիէլի գիրքը կարելի է նկատել որպէս իմաստասիրական գրականութեանը պատկանող գործ:

Աստուածային ներշնչման ներքոյ շարադրուած այս գրքերից բացի, հրապարակ են իջել գրական բազմազան կերպերի պատկանող ուրիշ շատ գրքեր: Այսպէս կոչուած անկանոն կամ պարականոն գրքերն են: Որպէս օրինակ կարող ենք յիշել Ենոքի գիրքը, Տասներկու Նահապետների Կտակը, Մովսէսի Համբարձումը, Սողոմոնի Սաղմոսները, Եզրասի Չորրորդ գիրքը, Բարուքի Յայտնութիւնը, եւ այլն: Նոր Կտակարանի ժամանակներին շատ մօտ դարաշրջանում գրուել են Քումրանի գրքերը, որոնց մէջ աչքի են ընկնում Համայնքի Կանոնադրութիւնը, Օրհնութիւնները, «Լոյսի որդիների պատերազմը ընդդէմ խաւարի որդիների», Դամասկոսի Փաստաթուղթը, Ամբակումի Մեկնութիւնները: Բոլոր այս գրքերը, ինչպէս նաեւ հրեական հնագոյն գրականութիւնը, թէեւ գրուած չեն Սուրբ Հոգու ներշնչման ներքոյ, այնուամենայնիւ մեծապէս օգտակար են Աստուածաշնչի ուսումնասիրման համար, քանի որ տեղեկութիւններ են տալիս սովորութիւնների, աւանդութիւնների եւ հաւատալիքների մասին, որոնք ժողովրդի մէջ ներկայ էին այդ ժամանակներում:

Յիսուսի օրօք, Հին Կտակարանի եբրայայան կանոնը արդէն սահմանուած էր: Սակայն, Առաջին դարի վերջում, տարակարծութիւններ ծագեցին Պաղեստինի եւ Եգիպտոսի հրեաների միջեւ: Պաղեստինի հրեաները համարում էին՝ թէ կանոնը պարունակում էր միայն քսաներկու գիրք, եբրայական այբուբենի տառերի թուով, որին հասնում էին՝ իրար միացնելով հետեւեալ գրքերը. Սամուէլի Առաջինն ու Երկրորդը, Թագաւորների Առաջինն ու Երկրորդը, Մնացորդաց Առաջինն ու Երկրորդը, Եզրասն ու Նէէմիան, Դատաւորներինն ու Հռութը, Երեմիան եւ իր Ողբերը: Սա պաղեստինեան կանոնն էր: Մինչդեռ Եգիպտոսի հրեաները (կամ հէլլէնականները) որպէս ներշնչուած էին ընդունում նաեւ Տովբիթի, Յուդիթի, Իմաստութեան, Սիրաքի, Բարուքի եւ Մակաբայեցիների Առաջին ու Երկրորդ գրքերը: Սա աղեքսանդրիական կոչուող կանոնն է: Այս վերջինին մաս կազմող գրքերը, որոնք չկան պաղեստինեան կանոնում, կոչւում են երկրորդականոն, զանազանուելով միւս առաջնականոններից:

Քրիստոնեաներիս համար, եբրայական կանոնը կարեւոր էր, քանի որ Յիսուս եւ Առաքեալները գործածել էին նրա գրքերը, ճանաչելով նրանց աստուածային ներշնչումը: Հին Կտակարանի Եօթնասնից կոչուող յուսարէն թարգմանութիւնը, որը գործածուել է Առաքեալների քարոզչութեան ժամանակ, պարունակում է աղեքսանդրիական կանոնը: Այս իսկ պատճառով, Եկեղեցին ընդունեց աղեքսանդրիական կանոնը, թէեւ Սուրբ Հայրերից ոմանք, որոնց մէջ նաեւ Սբ. Հերոնիմոսը, առաւել հակուած էին ընդունելու պաղեստինեանը:

Նոր Կտակարան

Քրիստոսի Առաքեալները նոյնպես իրենց քարոզչութեան վաւերականութիւնը բացայայտում էին հրաշքներով, որոնք վկայում էին Սուրբ Հոգու ներկայութիւնն ու օժանդակութիւնը: Առաքեալները, իրենց յանձնուած առաքելութեանը հաւատարիմ, Աւետարանը քարոզեցին այն ժամանակ ճանաչուած աշխարհի բոլոր ժողովուրդներին: Նրանց քարոզչութիւնը կամաց կամաց գրաւոր շարադրուեց: Շարադրուած առաջին Աւետարանը Մատթէոսինն է, արամայերէն լեզուով: 51 թուականին Պողոս Առաքեալը գրել է Թեսաղոնիկեցիներին գրուած երկու Նամակները, որոնց հետեւել են միւսները, մինչեւ 67 թուականն ընկած տարիներում: «Համաբարբառ» կոչուող առաջին երեք Աւետարանները – Մատթէոսի, Մարկոսի եւ Ղուկասի – գրուել են 70 թուականից առաջ: Հետեւել են Գործք Առաքելոց գիրքը եւ Ընդհանրական առաջին Նամակները. Յակոբի, Յուդայի եւ Պետրոսի: Առաջին դարի վերջաւորութեանը, Յովհաննէս Առաքեալը գրել է Յայտնութեան գիրքը, երեք Նամակները եւ չորրորդ Աւետարանը:

Ինչպէս Հին Կտակարանի պարագային, նորկտակարանեան կանոնի կազմաւորումը նոյնպէս կատարուել է աստիճանաբար: Չրդ դարի վերջաւորութեանը, կանոնն արդէն սահմանուած էր, ինչպէս վկայում է «Մուրաթորեան Կանոնը»: Արեւմուտքում, 200 թուականից սկսած, որպէս կանոնական ընդունուել են չորս Աւետարանները, Պողոս Առաքեալի 13 Նամակները (չի յիշատակուած Եբրայեցիներին ուղղուած Նամակը, որը մինչեւ 380 թուականը ընդունուած չէր արեւմտեան կանոնից ներս), Յակոբոսի, Պետրոսի Առաջին եւ Երկրորդ, Յովհաննէսի Առաջին եւ Երկրորդ Ընդհանրական Նամակները: Չեն յիշատակուած Յովհաննէսի Ընդհանրական երրորդ Նամակը եւ Յայտնութիւնը: Մօտաւորապէս 382 թուականին պատկանող «De explanatione fidei» վճռագրում այլեւս յիշուած են Նոր Կտակարանի բոլոր գրքերը:

Արեւելեան Եկեղեցիներում տակաւին վերապահութեամբ էին մօտենում Պողոս Առաքեալի կողմից Եբրայեցիներին ուղղուած Նամակին, ինչպէս նաեւ Յակոբոսի, Պետրոսի, Յովհաննէսի, Յուդայի Ընդհանրական Նամակներին եւ Յայտնութեան գրքին: Ահա այս պատճառով են այդ գրութիւնները կոչուած երկրորդականոն: Չորրորդ դարում, Արեւմտեան Եկեղեցին վերջնականօրէն սահմանել էր Աստուածաշնչի կանոնը, մինչ Արեւելքում, մինչեւ ութներորդ դարը, տակաւին չէր հաստատուել միեւնոյն համաձայնութիւնը: Տասնվեցերորդ դարում, բողոքական հոսանքները յաւակնաբար փորձեցին փոփոխել Եկեղեցու աւանդական ուսմունքը: Տրիդենտեան ժողովի (1545-1563թթ.) Չորրորդ Նիստում, Եկեղեցին ընդգրիմացաւ բողոքական սխալներին եւ մէկ անգամ եւս հանդիսաւոր կերպով սահմանեց սրբազան գրքերի կանոնը, որն արդէն ճանաչուել էր Ֆիրենցէի ժողովում (1439-1445թթ.):

Աստուածաշնչի կանոնը կազմող սրբազան գրքերի Եկեղեցու կողմից սահմանուած ցանկը հետեւեալն է.

Հին ԿՏԱԿԱՐԱՆ

Հնագնադէտանք. Ծննդոց, Ելից, Ղեւտացւոց, Թուոց, Երկրորդումն Օրինաց.

Պատմական Գրչեւրը. Յեսու, Դատաւորաց, Հռութ, Սամուէլի Առաջին եւ Երկրորդ, Թագաւորաց Առաջին եւ Երկրորդ, Մնացորդաց Առաջին եւ Երկրորդ, Եզրաս, Նէէմիա, Տովբիթ, Յուդիթ, Եսթեր, Մակաբայեցւոց Առաջին եւ Երկրորդ.

Իմաստասիրական Գրչեւրը. Յոբ, Սաղմոսաց, Առակաց, Ժողովող, Երգ Երգոց, Իմաստութիւն, Սիրաք.

Մարգարէական Գրչեւրը. Եսայի, Երեմիա, Ողբք, Բարուք, Եզեկիէլ, Դանիէլ, Ովսէէ, Յովէլ, Ամոս, Աբդիա, Յովնան, Միքիէ, Նաում, Ամբակում, Սոփոնիա, Անգէոս, Զաքարիա, Մաղաքիա.

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա-ե ֆարանները՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի, Յովհաննէսի.

Գործի Առաքելոցը.

Պօղոս Առաքելալի Նամակները. Հռոմէացիներին, Կորնթացիներին Առաջին եւ Երկրորդ, Գաղատացիներին, Եփեսացիներին, Փիլիպեցիներին, Կողոսացիներին, Թեսաղոնիկեցիներին Առաջին եւ Երկրորդ, Տիմոթէոսին Առաջին եւ Երկրորդ, Տիտոսին, Փիլիմոնին, Եբրայեցիներին.

Ընդհանրական Նամակները. Յակոբոսի, Պետրոսի Առաջին եւ Երկրորդ, Յովհաննէսի Առաջին, Երկրորդ եւ Երրորդ, Յուդայի.

Յովհաննէսի Յայրենութիւնը:

Չ) ԱՍՏՈՒԱԾԱՇՇՆՉԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՄԸ ԵՒ ՆՐԱՆՈՒՄ ՆԵՐԿԱՅ ՉԱՆԱՉԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԸ

Աստուածաշունչը Աստծոյ Խօսքի վկայութիւնն է, որ աւանդուել է մարդկային ձեռքով շարադրուած գրութիւնների միջոցով: Գրական որեւէ գործ ենթակայ է տարբեր մեկնաբանութիւնների. բոլոր մեկնաբանութիւնները չէ՛ որ միեւնոյն խորութեամբ թափանցում են Աստուածաշնչի հարստութիւններից ներս եւ բոլորը չէ՛ որ հաւասար կերպով ճշմարտացի են: Որեւէ գրութիւն պէտք է մեկնաբանուի իր իւրայատկութիւնների համաձայն, հաշուի առնելով տուեալ գրութեան նկարագիրը, հեղինակի անձնական պարագաները, աւանդուած ճշմարտութիւնները արտայայտելու համար հեղինակի կողմից օգտագործուած գրական կերպերը, շարադրման տեղի պատմական միջավայրը, միջավայրը՝ որում գրութիւնը ընթերցուելու է, եւ այլն:

Աստուածաշունչը կրօնական նկարագիր ունեցող գիրք է. ինչպէս ուսուցանում է հրեաների եւ քրիստոնեաների համընդհանուր հաւատքը, Աստուածաշնչի հեղինակը Աստուած Ինքն է, որ ներշնչել է որոշ մարդկանց, որոնք նիւթապէս շարադրել են գիրքը: Աստուածաշնչի ճշմարիտ, կարելի է ասել՝ հարազատ մեկնաբանութիւնը միշտ պէտք է կողմնորոշուած լինի այս փաստի կողմից, այսինքն՝ որ խօսքը վերաբերում է Աստծոյ կողմից ներշնչուած գրքերին, որոնց միջոցով, գործածելով մարդկային լեզուն եւ խօսակցութիւնը, Աստուած խօսում է մարդկանց:

Աստուածաշնչի աստուածային ներշնչուածութիւնը վճռական հետեւանքներ ունի մեկնաբանութեան ելքի վրայ. Աստծուց բխող Խօսքի հարստութիւնը անսպառելի է մարդու համար: Կարող ենք հաստատել՝ որ Աստուածաշնչում ներկայ են մի քանի իմաստներ, կամ ինչպէս այլաբանօրէն արտայայտուած էին Յիսուսի ժամանակակից ուսուցիչները՝ Աստուածաշունչն ունի եօթանասուն դէմք: Բացի սա, Աստուածաշնչում Աստուած խօսում է մարդկանց միջոցով – սրբազան հեղինակները, որոնք շարադրել են գրութիւնը – եւ անսխալ մեկնաբանութեան առաջին օրէնքն այն է՝ որ հարկաւոր է շարունակ ջանալ հասկանալ՝ թէ սրբազան հեղինակներն ի՞նչ են կամեցել ասել իրենց համապատասխան գրութիւններում, չխեղաթիւրելու համար նրանց հաստատումները: Իմաստը՝ որը հեղինակները կամեցել են ներկայացնել իրենց գրութիւններում, նախեւառաջ *դասուցի* կամ պատմական իմաստն է. սա՛ է Աստուածաշնչի որեւէ տեսակի վերլուծման համար անհրաժեշտ մեկնակէտը:

ՏԱՌԱՅԻ ԻՄԱՍՏԸ

Տառացի իմաստն այն է՝ որն իսկոյն ընկալուած է գրութիւնից, հանաձայն այն նախադասութիւններին՝ որոնցով կազմուած է: Մէջբերենք, օրինակի համար, այն

հատուածը՝ ուր պատմում է իսրայէլացիների անցքը Կարմիր Ծովով¹: Ո՞րն է այս հատուածի առաջին նշանակութիւնը: Իսրայէլացիները, Եգիպտոսից փախչելով, իրենց առջեւ գտնում են ծովը: Որպէսզի ժողովուրդը կարողանայ անցնել, Աստուած մի հրաշք է կատարում, չորացնելով ծովի մի մասը: Երբ իսրայէլացիներն անցնում են, ծովի ջրերը վերադառնում են իրենց տեղը, այնպէս՝ որ եգիպտական զօրքը, հոսանքի մէջ թաւալուած, չի կարողանում շարունակել իսրայէլացիների հետապնդումը: Տառացի իմաստը համապատասխանում է գործածուած բառերի նշանակութեանը: Տառացի իմաստը, ապա, բաժանում է երկու մասի – յատուկ եւ ոչ յատուկ – ինչը որ սովորական է գրական բոլոր գործերին: Տառացի յատուկ իմաստն այն է՝ երբ բառերը գործածւում են իրենց յատուկ իմաստով, իսկ տառացի ոչ յատուկ իմաստը՝ երբ բառերը գործածւում են հոետորական պերճախօսութեան երանգաւորումով: Եթէ, օրինակ, ասում ենք. «Հովիտները ժպտում են», տուեալ դէպքում բառերը չենք գործածում տառացի յատուկ իմաստով, որովհետեւ գործածում ենք այլաբանական արտայայտութիւն: Նմանապէս, երբ ասում ենք. «Այս գաւաթը խմում եմ ... », իմաստի փոխանակութիւն ենք կատարում պարունակողի եւ պարունակութեան միջեւ, որովհետեւ իրականում խմում ենք ոչ թէ գաւաթը, այլ գաւաթի միջի հեղուկը: Այս եւ այսպիսի ուրիշ բազում արտայայտութիւնները բոլոր լեզուներին հարազատ հոետորական այլաբանութիւններ են եւ մեկնողական յատուկ դժուարութիւններ չեն առաջացնում:

Հարկաւոր է միշտ յիշել, որ Աստուածաշունչը, գրական ուրիշ որեւէ գործի նման, կրել է այն դարաշրջանի ոճական ազդեցութիւնը, որում շարագրուել է: Արեւելեան ժողովուրդները, օրինակ, յաճախ են գործածում մեծաբանութիւնները. այսպէս, երբ Յովհաննէս Աւետարանիչն ասում է՝ թէ եթէ մէկ առ մէկ գրի առնէր Յիսուսի կողմից կատարուած կամ ուսուցանուած բոլոր բաները՝ ամբողջ աշխարհը բաւական չէր լինի պարունակելու համար այդ գրքերը², խօսքը վերաբերում է գրական մեծաբանական ոճին:

Եզրակացնելով ասենք՝ որ Աստուածաշունչում գոյութիւն ունեն ոճական զանազան հիւսուածքներ, որոնք իւրայատկութիւններն են երբայեցերէն եւ յունարէն լեզուների. պատմուածքներ, բանաստեղծութիւններ, առակներ, եւ այլն, եւ այլն:

ՏԱՌԱՅԻ ԻՍՄԱՏԻՑ ԲԱՅԻ

Երբ ճշտում ենք՝ թէ սրբազան հեղինակներն ի՞նչ են կամենում ասել իրենց համապատասխան գրութիւնների միջոցով, Աստուածաշունչի ընթերցանութեան մէջ հարկաւոր է փնտռել՝ թէ Աստուած ի՞նչ է կամեցել յայտնել մարդկանց այդ գրութիւնների միջոցով, որոնք շարագրուել են իր ներշնչման ներքոյ: Սրա համար, պէտք է ոչ նուազ ջանասիրութեամբ ուշադրութիւն դարձնել Աստուածաշունչի պարունակութեանը իր ամբողջութեան եւ միութեան ներսում, հաշուի առնելով նաեւ Եկեղեցու երկհազարամեայ Աւանդութիւնը:

Քանի որ Աստուածաշունչն ունի աստուածային հեղինակ եւ մարդկային հեղինակներ, ուրիշ գրքերի համեմատ՝ ունի որոշ առանձնայատկութիւններ: Տուեալ դէպքում, գտնում ենք հնարաւորութեան առջեւ, որ սրբազան հեղինակները, Աստուծոց առաջնորդուած լինելով հանդերձ, կարող էին բացարձակ յստակութեամբ չհասկանալ որոշ իրողութիւններ, որոնք տարիներ յետոյ միայն, Յայտնութեան ա՛յլ դէպքերի շնորհիւ, հասկացուելու էին իրենց լրակատար իմաստով:

Ընդհանրապէս, Հին Կտակարանի սրբազան հեղինակները Յայտնութեան շուրջ ունէին սկզբնական, թերեւս կարելի է ասել՝ տարրական տեսութիւն, քանի որ Յայտնութիւնը ամբողջովին հասկացում է միմիայն Նոր Կտակարանի լոյսի ներքոյ: Ինչպէս գեղեցիկ կերպով արտայայտւում է Սբ. Օգոստինոսը. «Նոր Կտակարանը

¹ Հմմտ. Ել 14, 15...

² Հմմտ. Յվհ 21, 25

թաքնուած է Հնում, իսկ Հինը բացայայտուած է Նորում»¹: Օրինակ, Ք.ա. Երբ դարուած ապրող իսրայէլացիները մեսիական գաղափարները շատ սահմանափակ էին եւ միմիայն Աւետարանիչների գաղափարներով է՝ որ հասան իրենց լիութեանը: Այստեղից հետեւում է, որ երբ Հին Կտակարանի սրբազան հեղինակներից մէկը Մեսիայի մասին խօսում է արտայայտութիւններով՝ որոնք չի հասկանում կատարեալ կերպով, Աստուած կամենում է յայտնել ինչ որ մի բան՝ որը մարդկութիւնը կը կարողանար հասկանալ միմիայն երբ իրականանային նախահայրերի կողմից աւետուած այդ փրկարար իրադարձութիւնները:

Ահա այս պատճառով, Եկեղեցին Հին Կտակարանի հատուածներից մի քանիսը մեկնաբանում է մեսիական ցայտուն իմաստով, թէեւ դժուար է մտածելը՝ թէ սրբազան հեղինակը լիովին գիտակից էր այն ամէնին՝ որ արտայայտում էր: Գրութիւնները մեկնաբանելիս, անդրադառնում ենք՝ որ հնարաւոր է նշմարել նրանցում աւելի մի բան՝ քան ասել են մարդկային հեղինակները: Այս իմաստը ընկալում ենք ամբողջ Աստուածաշնչի միասնական լոյսի ներքոյ: Այս իմաստը աստուածաշնչեան գիտութիւնների որոշ մասնագէտների կողմից անուանուած է «տառացի ամբողջական իմաստ»:

ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԻՍԱՍԵԸ

Հին Կտակարանի որոշ հատուածներին Եկեղեցու կողմից տրուած մեկնաբանութեան համաձայն, այս ամբողջական իմաստի գոյութիւնը ներկայանում է որպէս Աստուածաշնչի վրայ հիմնուած եւ չի հակասում ընդհանրական ուղղափառ ուսմունքին: Քանի որ Աստուած Ինքն է Աստուածաշնչի գլխաւոր հեղինակը, կարող է յայտնուելիք ճշմարտութիւններից մէկը մասնակի յայտնել Յայտնութեան ինչ որ մի կէտում, աւելի ուշ յայտնելով ամբողջական իմաստը, այսպիսով լիովին հասկացնելով նախորդ մասնակի յայտնութեան նշանակութիւնը: Բայց այս իմաստը մարդկանց անձնական հանճարի արդիւնքը չէ. արդէն իսկ ներկայ է Յայտնութեան մէջ:

Օրինակ, Ծննդոց գրքի երրորդ գլխում, ուր նկարագրուած է սկզբնական մեղքի պատմութիւնը, Աստուած ասում է օձին. «Թշնամութիւն եմ հաստատելու քո եւ կնոջ միջեւ, քո սերնդի եւ նրա սերնդի միջեւ. նա [կնոջ սերունդը] ջախջախելու է գլուխդ [մի մահացու վէրք], իսկ դու դարանակալելու ես նրա գարշապարը»: Սրբազան հեղինակը հաւանաբար ամբողջական խորութեամբ չի հասկացել այս խորհրդաւոր խօսքերը, մինչ Աստուած, ներշնչելով այս խօսքերը, ակնարկում էր Փրկութեան Պատմութեան յետագայ իրադարձութիւններին: Եկեղեցու մեկնաբանութիւնը այս հատուածում տեսնում է մեսիական մարգարէութիւններից առաջինը. կնոջ սերունդը գլխաւորապէս Քրիստոս Ինքն է, իսկ երկրորդ գծի վրայ՝ Մարիամը: Իսկապէս անհրաժեշտ չէր՝ որ սրբազան հեղինակը լիովին հասկանար այն խօսքերի տարողութիւնը, որոնք գրում էր աստուածային ներշնչումով:

Բայց ինչպէ՞ս է Եկեղեցին հասնում մեսիական հատուածների մեկնաբանութեանը: Այն պահին՝ երբ գրութիւնը շարադրուած էր, միմիայն Աստուած կարող էր ունենալ նրա լիակատար ճանաչումը. Եկեղեցին Աստուածաշնչի ամենախոր իմաստը բացայայտում է Յայտնութեան յետագայ կամ յաջորդական իրադարձութիւնների լոյսի ներքոյ եւ հիմնուելով տուեալների վրայ՝ որոնք եզրակացուած են Աստուածաշնչի ա՛յլ հատուածներից կամ Սրբազան Աւանդութիւնից:

Սա տեղի է ունենում մեսիական մարգարէութիւններից շատերի պարագային. հետեւաբար հաւանական է՝ որ մարգարէները չէին հասել ամբողջ տարողութեամբ հասկանալու այն՝ ինչ ասում էին. մենք, մինչդեռ, է՛լ աւելի խորքերն ենք թափանցում, որովհետեւ ունենք այլեւս ամբողջացած Յայտնութեան լոյսը. Նոր Կտակարանի սրբազան հեղինակները, աստուածային ներշնչման պարգեւի շնորհիւ, մեկնաբանել են Հին Կտակարանի գրութիւնները եւ դիւրացրել են նրանց ընկալումը:

¹ Սբ. Օգոստինոս, *Quaestiones in Heptateucum*, 2, 73.

ՊԱՏԿԵՐԱՒՈՐ ԻՍԱՍԸ

Տառացի իմաստից բացի, նկարագրուած իրականութիւնները – առարկաներ, անձեր, դէպքեր – իրենց յատուկ իմաստի հետ միասին կարող են ունենալ նաեւ այլաբանական կամ պատկերաւոր իմաստ:

Օրինակ, Հին Կտակարանի զատկական Գառը *պարկէրն*¹ է Քրիստոսի: Կամ հակառակը. Քրիստոս՝ Հին Կտակարանի զատկական Գառան մէջ նախապատկերուած իրականութիւնն է: Այս այլաբանական պատկերները չենք կարող յօրինել ինքներս, այլ պէտք է որ ներկայ լինեն Յայտնութեան մէջ: Տուեալ դէպքում, Յովհաննէս Մկրտիչն է – որը մարգարէ է եւ խօսում է աստուածային ներշնչմամբ – որ հաստատում է թէ Աստծոյ ճշմարիտ Գառը այն մէկը չէր՝ որ զոհաբերուած էր իսրայէլացիների կողմից, այլ՝ Քրիստոս¹:

Պատկերաւոր իմաստը բացատրում է մի շարք մարգարէութիւններ, որոնք վերաբերում են Եահուէի Ծառայի (Մեսիայի) չարչարանքներին: Այդ մարգարէութիւններից մի քանիսը նրանում տեսնում են մորթուելու տարուող գառը², եւ Յիսուս, երբ ընդունում է այս պատկերը, կամենում է սրանով նշանակել՝ որ իսկապէս ինքն է Փրկիչը, որ մահանում է որպէս մարդկանց մեղքերի քաւութեան համար մատուցուած զոհ:

Պատկերաւոր իմաստով, Կարմիր Ծովի միջով անցնելը նշանակում է մարդկանց փրկելու աստուածային կամքը: Այդ հրաշալի դէպքի շնորհիւ Իսրայէլի ժողովուրդը ազատագրուեց, այնպէս՝ ինչպէս քրիստոնեան արդարանում է անցնելով Մկրտութեան խորհրդի ջրերի միջով: Այսպիսով, Կարմիր Ծովի ջրերը ստանում են պատկերաւոր իմաստ, նշանակելով քրիստոնէական Մկրտութեան ջուրը, որը մարդուն պարզեւում է փրկութիւնը:

Յատկանշական հատուածներից մէկն է նաեւ *չարկական Գառան* ծիսական արարողութիւնը, որին անցողակի կերպով ակնարկեցինք³: Եգիպտոսից դուրս գալուց առաջ, Աստուած պատուիրում է՝ որ իսրայէլացի բոլոր ընտանիքները զոհաբերեն մէկ գառ, ուտեն այն պատուիրուած որոշակի ձեւով, իսկ արիւնը սրսկեն իրենց տների դռների վրայ: Այսպիսով, եգիպտացիներին պատժող մահաբեր հրեշտակը, դռների վրայ տեսնելով գառան արիւնը, անցնելու էր առանց այդ տանը վնասելու եւ իսրայէլացիները փրկուելու էին: Չորրորդ Աւետարանի սկզբում գտնում ենք մի հատուած, ուր պատմւում է թէ ինչպէս Յովհաննէս Մկրտիչը տեսնելով դէպի ինքը մօտեցող Յիսուսին, ասում է. «Ահա Աստծոյ գառը, ահա նա՝ որ ջնջում է աշխարհի մեղքը»⁴: Ինչպէս որ զատկական գառը զոհաբերուեց իսրայէլացիների փրկութեան համար, այնպէս էլ Յիսուս մահացաւ՝ փրկելու համար բոլոր մարդկանց⁵. զատկական գառը ստանում է պատկերաւոր իմաստ, որով ամբողջանում է տառացի իմաստը:

Ամփոփելով. պատկերաւոր իմաստն այն է՝ որը Հին Կտակարանի իրադարձութիւններում, անձերում կամ առարկաներում նախապատկերուած է տեսնում նոր Կտակարանի իրականութիւնները:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆԸ

Վերոյիշեալ երեք իմաստները – տառացի, ամբողջական եւ պատկերաւոր – բոլորն էլ գտնւում են Աստուածաշնչում եւ օգնում են ճիշտ մեկնաբանելու սրբազան

¹ Յվհ 1, 29.36; Հմմտ. նաեւ 1Կր 5, 7-8; Յյտ 5, 6-14; 14, 1-5; 17, 14; 19, 6-9; 21, 9.14.22-23.27; 22, 1-5

² Հմմտ. Ես 53, 7

³ Հմմտ. Ել 12, 1-28; 20ր 16, 1-8

⁴ Յվհ 1, 29

⁵ Հմմտ. Ես 53, 7

գրութիւնները: Եկեղեցին, ուսուցանելով՝ որ Աստուածաշունչը պէտք է ընթերցուի եւ մեկնաբանուի միեւնոյն Հոգու օգնութեամբ՝ որի ներշնչմամբ որ շարագրուել է, դիմում է Սուրբ Հոգուն, Հին եւ Նոր Կտակարանները ներշնչողին, որն օգնեց Առաքեալներին ըմբռնելու Քրիստոսին վերաբերող ճշմարտութիւնները եւ որը ոգեշնչում ու առաջնորդում է Եկեղեցուն, վերջինիս կեանքում եւ ճշմարտութեան աւանդման գործում:

Քրիստոս եւ Առաքեալները, յատկապէս Հին Կտակարանի մեկնաբանութեան վերաբերեալ, ուսուցանում են մեզ ճանապարհը՝ որով հնարաւոր է ընկալել Աստուածաշնչի խոր իմաստը: Յիսուսի կեանքի գրուագներից մէկը, Ղուկասի Աւետարանում պատմուած, կարող է մեր համար մատնանշել՝ թէ Յիսուս ինչպէս էր ուսուցանում Հին Կտակարանի իմաստը եւ թէ որոնք են Աստուածաշնչի ճշմարտացի մեկնաբանութեան համար քրիստոնէական ուսմունքի հիմքերը: Աւետարանիչն ասում է, որ Յիսուս «եկաւ Նազարէթ ... եւ շաբաթ օրը ժողովարան մտաւ: Նրան տուին Եսայի մարգարէի գիրքը ... : Երբ գիրքը բացեց, գտաւ այն հատուածը՝ ուր գրուած էր. "Տիրոջ Հոգին իմ վրայ է, դրա համար իսկ օծեց ինձ, առաքեց ինձ աղքատներին բարի լուր աւետելու ... ": Ապա փակեց գիրքը ... : Յայնժամ սկսեց ասել. "Այսօր կատարուեց այս Գրութիւնը, որը ձեր ականջներով լսեցիք"»¹:

Հին Կտակարանը իր լրումին, կատարմանը, իրագործումին հասնում է Յիսուսի անձում: «Ամէն ինչ կատարուած է»²: Յիսուսի կեանքի դէպքերում կատարուում են Հին Կտակարանի մարգարէութիւններն ու նախապատկերումները³. մեսիական մարգարէութիւնների, Օրէնքի եւ սրբազան պատմութեան խոր իմաստը վերջնական ու ամբողջական կերպով հասկացուում են յանձինս Յիսուս Քրիստոսի:

Պօղոս Առաքեալը զանազանութիւն է դնում Աստուածաշնչի տառի եւ Հոգու միջեւ⁴: Ասելով «Աստուածաշնչի տառ», Առաքեալը հասկանում է Հին Կտակարանի իմաստը, այնպէս՝ ինչպէս ըմբռնում էին հրեաները Յիսուսի կողմից կատարուած ամբողջական Յայտնութիւնից առաջ. «Աստուածաշնչի հոգի» արտայայտութեամբ, մինչդեռ, Առաքեալը հասկանում է Յիսուսի հանդէպ հաւատքի լոյսի ներքոյ ըմբռնուած իմաստը: Աստուածաշնչի հոգին լիովին ընկալուում է միմիայն քրիստոնէական հաւատքի ներսում: Գրութիւնները եւս մէկ անգամ «կատարուել են» եւ Սուրբ Հոգին բացել է Առաքեալների մտքերը, որպէսզի «կարողանային հասկանալ գրութիւնները»:

Յիսուս եւ իր Առաքեալները վերջնական կերպով հաստատել են քրիստոնէական մեկնողական գիտութեան հիմնական սկզբունքները. Քրիստոս կենտրոնն է Աստուածաշնչի եւ նրա իմաստի, Մեսիան աւետող Հին Կտակարանի, ինչպէս նաեւ Նորի՝ որում Մեսիան ներկայանում է որպէս կատարուած իրականութիւն: Այս սկզբունքը գրութիւնների բանական որեւէ վերլուծումից վեր է, կողմնորոշում է այդ վերլուծումները, դատում է գործածուած սկզբունքների վաւերականութիւնը եւ Աստուածաշունչն ընթերցողին ազատում է միմիայն տառացի իմաստի վրայ հիմնուած մեկնութիւնների կարծատեսութիւնից: Աստուածաշնչի մեկնաբանութիւնը, հետեւաբար, իսկապէս քրիստոնէական է, երբ բանականութիւնը եւ օժանդակ գիտութիւնները – իմաստասիրութիւնը, պատմութիւնը, լեզուաբանութիւնը եւ այլն – լուսաւորուած եւ կենդանագործուած են Հոգու կողմից, կամ ուրիշ խօսքերով՝ քրիստոնէական հաւատքից:

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆԸ

«Եթէ խոր լուրթիւն է տիրում, երբ հաւաքուածների առջեւ կարդում են թագաւորի նամակները, առաւել եւս դուք բոլորդ պարտաւոր էք լուրթիւն պահպանել եւ ոտքի կանգնել, հոգով եւ մտքով ուշադիր, այժմ, երբ ընթերցուելու է ո՛չ թէ ինչ որ մի իշխանի

¹ Ղուկ 4, 16...

² Յվհ 19, 30

³ Հմմտ. Մտթ 1, 22; 2, 15; 4, 14; ...

⁴ Հմմտ. 2Կր 3, 45; Հւմ 2, 29

հրամանը, այլ հրեշտակների Թագաւորի Յայտնութիւնը: Եթէ այսպէս վարուենք, Ինքը Սուրբ Հոգին կ'առաջնորդի մեզ Իր շնորհով մինչեւ Թագաւորի գահը, որպէսզի վայելենք այնտեղ անվախճան բարիքները, շնորհով եւ ողորմութեամբ Յիսուս Քրիստոսի, մեր Տիրոջ, որին վայելում են փառք եւ արքայութիւն, Հօր եւ Սուրբ Հոգու հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն»¹:

Իր մէկ ա՛յլ աշխատութիւնում նոյնպէս, Սբ. Յովհան Ոսկեբերանը անուանում է Աստուածաշունչը «Աստծոյ կողմից մարդկանց ուղարկուած նամակ»²: Քանի որ ճիշտ այդպէս է, առաջին բանը՝ որ պարտաւոր ենք անել Աստուածաշունչն ընթերցելիս, մեզնում աճեցնելն ու բազմապատկելն է այդ աստուածային նամակների պարունակութիւնը ճանաչելու եւ նրա շուրջ խորհրդածելու փափաքն ու ուրախութիւնը: Սբ. Հերոնիմոսն արդէն, իր ընկերներից մէկին ուղղուած նամակում, յանձնարարում է. «Յաճախ ընթերցիր Աստուածաշունչը: Աւելի՛ն կ'ասէի. ձեռքերդ երբեք չպէտք է վար դնեն Սուրբ Գիրքը»³:

Եկեղեցին ուժգին յորդորում է բոլոր հաւատացեալներին՝ Աստուածաշնչի յաճախակի ընթերցանութեամբ սովորել **Յիսուս Քրիստոսի վեճ գրքո-թիւնը**⁴: «Աստուածաշնչի շուրջ անգիտութիւնը, իրօք, Քրիստոսի շուրջ անգիտութիւն է»⁵: Ամէն ոք պարտաւոր է յօժարութեամբ մերձենալ սրբազան գրութիւններին, ինչպէս անձնական բարեպաշտ ընթերցանութեամբ, այնպէս էլ Սրբազան Ծէսի միջոցով, որը հարուստ է աստուածային խօսքերով: Հարկաւոր է յիշել, սակայն, որ Աստուածաշնչի ընթերցանութեանը պէտք է ընկերանայ աղօթքը, որպէսզի վերածուի Աստծոյ եւ մարդու միջեւ մտերմիկ խօսակցութեան, որովհետեւ «երբ աղօթում ենք՝ խօսում ենք Աստծոյ հետ, իսկ երբ ընթերցում ենք աստուածային պատգամները՝ լսում ենք Նրան»⁶:

Աստուածաշնչի պտղառատ ընթերցանութեան համար, անհրաժեշտ է մեկնել **Յիսուս Քրիստոսի մեակ Եկեղեցո- Հասարակ նկարմամբ Հնապանգո-թիւնից**, այսինքն՝ հաւատալ եւ դաւանել այն ամէնը՝ ինչը որ Եկեղեցին հաւատում, դաւանում եւ ուսուցանում է Աստուածաշնչի, նրա կանոնի, աստուածային ներշնչուածութեան, անսխալականութեան եւ ճշմարտախօսութեան, վաւերականութեան եւ պատմականութեան վերաբերեալ:

Բացի սա, Աստուածաշնչի ըմբռնման համար հարկաւոր են նաեւ **Քարեպաշտո-թիւնը** եւ **Կեանքի արթո-թիւնը**: Աստծոյ շարադրուած Խօսքի շուրջ միշտ աւելի մեծ ճանաչողութեան հասնելու համար, մարդն աղօթքով պէտք է տրամադրուի ընդունելու գերբնական լուսաւորութիւնը, որը ճրիօրէն գալիս է Սուրբ Հոգուց: Ով ընթերցում, խորհրդածում կամ ուսումնասիրում է Աստուածաշունչը, շարունակական անդադար աղօթքի մէջ է, Աստծոյ հետ ընտանի յարաբերութեամբ: Աստուածային պատգամների գաղտնիքներից ներս թափանցելու ընդունակութիւնը կախումնաւոր չէ մարդկային օժանդակ գիտութիւններից – իմաստասիրութիւն, լեզուաբանութիւն, հնէաբանութիւն, հասարակագիտութիւն, հոգեբանութիւն եւ այլն – թէեւ դրանք բաւական օգտակար են, այլ՝ անձնական կեանքի սրբութիւնը կատարելագործելու փափաքից, կամ ուրիշ խօսքերով՝ Աստծոյ լոյսից: Այս առումով, կարող ենք յիշել Սբ. Օգոստինոսի կողմից տրուած նմանութիւնը. իսրայէլացիները, Եգիպտոսից ելքի ժամանակ, իրենց հետ տարան նուրբ զարդարանքներով ոսկեղէն եւ արծաթեղէն առարկաներ, ինչպէս նաեւ թանկարժէք քարեր եւ ճոխ հագուստներ, որոնք Եգիպտացիները գործածում էին իրենց անձնական զարդարանքի եւ կուռքերին մատուցուած պաշտամունքի համար: Եւ սակայն, ճիշտ այդ առարկաներով հրեաները պատրաստեցին ճշմարիտ Աստծոյ պաշտամունքին ծառայող սպասները: Եկեղեցու Սուրբ Հայրապետը այս գաղափարը վերագրում է նաեւ մարդկային

¹ Սբ. Յովհան Ոսկեբերան, *Homiliae in Matthaem*, 1, 8.

² Սբ. Յովհան Ոսկեբերան, *Sermones in Genesim*, 2, 2.

³ Սբ. Հերոնիմոս, *A Nepoziano sacerdote*, 52, 7.

⁴ Փլպ 3, 8

⁵ Սբ. Հերոնիմոս, *Comm. in Is.*, Prol.

⁶ Սբ. Ամբրոսիոս Միլանցի, *De officiis ministrorum*, I, 20, 88.

վերոյիշեալ գիտութիւնների գործածմանը, որոնք կարող են օգնել առաւել խոր կերպով հասկանալու Աստուածաշունչը, պայմանով՝ որ իսկապէս ստորադասուեն սրբազան գրքերի պատգամին եւ իսկապէս ծառայեն նրան: Մարդկային տուեալ գիտութիւնների գործածումն, այսինքն, պէտք է կատարուի համեստութեամբ եւ Աստուածաշնչի հանդէպ յարգանքով, ինչպէս նաեւ՝ շարունակ հայցելով աստուածային շնորհը. «Ով զբաղուում է Աստուածաշնչի ուսումնասիրութեամբ ... պարտաւոր է անդադար խորհրդածել Առաքելի խօսքերի շուրջ. "Գիտութիւնը հպարտացնում է, մինչ սէրը՝ նպաստում" (1Կր 8, 1): Պարտաւոր է իսկապէս գիտակից լինել, որ Եգիպտոսից հարուստ դուրս գալով հանդերձ, չի կարող փրկուել՝ եթէ չի տօնում Չատիկը»¹:

Վերջում, պահանջուում է նաեւ **խոնարհութեան** առաքինութիւնը, որը մեզ մանուկներ է դարձնում Աստուծոյ՝ մեր Հօր առաջ: Միմիայն այսպէս մեզնում կը կատարուեն Քրիստոսի խօսքերը. «Օրհնում եմ քեզ, Հայր, Տէր երկնքի ու երկրի, որովհետեւ այս բաները թաքցիր իմաստուններից ու գիտուններից եւ յայտնեցիր փոքրերին»²:

Բարեպաշտութիւնը եւ խոնարհութիւնը գործում են՝ նաեւ երբ չենք յանդուրժում եւ մերժում ենք այն կարծիքները՝ որոնք հակառակում են Եկեղեցու Վարդապետութեան եւ Աւանդութեան կողմից մշտապէս աւանդուած ուսմունքին: Նշուած երկու առաքինութիւնները օգնում են նաեւ համոզուելու, որ միմիայն բանականութեամբ անհնարին է հասնել գերբնական ճշմարտութիւնների ճանաչմանը եւ որ Աստուծոյ Յայտնութիւնը, այնպէս՝ ինչպէս ներկայացւում է Եկեղեցու Վարդապետութեան կողմից, նուաճման առարկայ չէ, այլ՝ ուրախասիրտ եւ զուարթամիտ ընդունման:

Հոգու այսպիսի դիրքորոշումներով օժտուած, քրիստոնեան կարող է սկսել աստուածային պատգամը պարունակող գրքերի ընթերցումը, որոնց մէջ, եթէ իսկապէս անկեղծ է, կը կարողանայ հանդիպել Քրիստոսին, քանի որ ինչպէս ասում է Սուրբ Օգոստինոսը. «Աստուածաշունչը հարկաւոր է նկատել որպէս մի դաշտ՝ ուր կամենում ենք կառուցել մեր տունը: Չպէտք է ծոյլ լինենք, ո՛չ էլ մակերեսային: Փորենք որքան կարելի է խորը, մինչեւ որ հասնենք վէմին. վէմն ինքը Քրիստոսն է (Հմմտ. 1Կր 10, 4)»³:



¹ Սբ. Օգոստինոս, *De doctrina christiana*, 2, 9, 14.

² Մտթ 11, 25

³ Սբ. Օգոստինոս, *In Ioannis Evangelium tractatus*, 23, 1.